

**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2010Թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Սույն զեկույցը ներկայացնում է ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման (ՀԳՄԾ) ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության տնային տնտեսություններում կոռուպցիայի վերաբերյալ անցկացված ընտրանքային հետազոտության հիմնական արդյունքները: Հետազոտության դաշտային աշխատանքները կատարվել են 2010թ. նոյեմբերին: Համեմատության համար զեկույցում օգտագործվել են նաև կոռուպցիայի մասին տնային տնտեսություններում 2008թ. և 2009թ. անցկացված հետազոտության արդյունքները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	3
2010թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՌՈՏ.....	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԾԻՔՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ	8
Հայաստանում տիրող ընդհանուր իրավիճակի ընկալումները.....	8
Հետաքրքրվածությունը քաղաքականությամբ և կառավարման համակարգով.....	11
Հայաստանի տնտեսական իրավիճակի ընկալումները.....	13
ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....	19
Հայաստանում կոռուպցիայի գնահատումը	20
Կոռուպցիայի մակարդակի ընկալումները տարբեր հաստատություններում, ոլորտներում և պաշտոնյաների շրջանում	27
Կոռուպցիոն վարքագծի ընկալումները	34
ԳԼՈՒԽ 3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ	36
Կոռուպցիայի հիմնական դրդապատճառները.....	37
Կոռուպցիայի առնչությամբ անհատական վարքագիծը	42
Կոռուպցիոն փորձառություն	45
ԳԼՈՒԽ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....	48
ՀԿ-ների, պետական կազմակերպությունների և մարմինների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկությունը	49
Իրազեկությունը կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին և դրանց արդյունավետության գնահատումը	55
Զանգվածային լրատվամիջոցները և ասեկոսեները որպես կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր	58
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	60
ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ.....	62
ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2008թ. 2009թ ԵՎ 2010թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ.....	84
ՀԱՎԵԼՎԱԾ Գ. 2010թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽԱՉԱԶԵՎ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ.....	161

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ամերիկայի ժողովուրդը հպարտ է Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ տնային տնտեսությունների ամենամյա հետազոտությունների շարքում երրորդ հետազոտությունը հովանավորելու համար: Մենք հուսով ենք, որ տարբեր կողմերը՝ պետական պաշտոնյաները, վերլուծական կենտրոնները, համալսարանները, լրագրողները, բլոգերները, բիզնես ընկերակցությունները, հանրային խմբերը, և, առհասարակ, քաղաքացիները, այս զեկույցում զետեղված տեղեկատվությունը կօգտագործեն որպես Հայաստանում առկա ամենալուրջ հիմնախնդիրներից մեկի վերաբերյալ քննարկման և բանավեճի հիմք: Այս հետազոտության տվյալները կարող են օգնել կառավարությանը՝ բացահայտելու կոռուպցիայի դեմ պայքարում գործարար հանրությանը և քաղաքացիական հասարակությանն ակտիվորեն ներգրավվելու հնարավորություններ: Հետազոտությունը կարող է ծառայել որպես գործիք թե՛ հիմնախնդիրները, և թե՛ գրանցված առաջընթացը ներկայացնելու համար, թեպետ, ինչպես որևէ այլ գործիք, այն կիմաստավորվի միայն գործնական կիրառման դեպքում: Այս նկատառումով է, որ մենք մեծապես խրախուսում ենք կառավարությանը, գործարար ոլորտին, քաղաքացիական հասարակությանը և ակադեմիական շրջանակներին ուսումնասիրել, վերլուծել և օգտագործել այս տվյալները:

Այս տարվա հետազոտությունը, ցավոք, ցույց է տալիս, որ Հայաստանի քաղաքացիների գերակշռող մասը (ավելի քան 80%-ը) շարունակում է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր համարել: Անցյալ տարվա նման, այս տարի ևս տասը տոկոսային կետով ավելացել է այն հայաստանցիների թիվը, որոնց կարծիքով կոռուպցիայի մակարդակը նախորդ տարվա համեմատ աճել է: Տարեցտարի աճել են նաև կաշառքների ձևով կոռուպցիոն դրսևորումների հաճախականությունն ու վճարվող գումարների չափը: Բացի այդ, կոռուպցիայի դեմ պայքարում կառավարության ջանքերը մարդիկ չեն համարում արդյունավետ, նվազում է նաև կոռուպցիայի դեմ պայքարելու՝ կառավարության անկեղծ ցանկության հանդեպ նրանց վստահությունը:

Հայաստանում կոռուպցիան հաղթահարելու համար խիստ անհրաժեշտ է, որ կառավարությունը ստանձնի արդյունավետ, ուժեղ առաջնորդի դերը, սակայն այդ ուղղությամբ ջանքերը ինքնահարատ դարձնելու համար խիստ կարևոր է նաև Հայաստանի ժողովրդի սրտաբուխ մասնակցությունը: Որպես լուրջ գործընկերներ կարող են ներգրավվել նաև ՀԿ-ները, վերլուծական կենտրոնները, լրատվամիջոցները, գործարար հանրությունը և շահագրգիռ այլ խմբեր: Հուսով ենք, որ այս հետազոտության տվյալները կօգնեն որոշարկել Հայաստանի զարգացման ուղին, ինչպես նաև ծառայել հետագա առաջընթացը չափելու ելակետ:

Մարի Լ. Յովանովիչ

Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպան

2010թ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՄԱՌՈՏ

- Հայաստանցիների մեծ մասը բավարարված չէ երկրում տիրող ընդհանուր (81%-ը) և տնտեսական (59%-ը) իրավիճակից. ըստ որում, չբավարարվածների տեսակարար կշիռը 2010 թվականին 2008 թվականի համեմատ ավելացել է:
- Հարցվածների կարծիքով, Հայաստանի առջև ծառացած առավել կարևոր հիմնախնդիրները տնտեսական բնույթի են. գործազրկությունը, գնաճը, աղքատությունը, ընդհանուր բնույթի տնտեսական խնդիրները և ցածր եկամուտները (աշխատավարձերը) շարունակում են մնալ մտահոգության առարկա: Գնաճի հիմնախնդիրը 2010թ. ավելի շատերին է մտահոգել (43%), քան 2008-ին (33%) և 2009-ին (20%): Երկրի առջև ծառացած հիմնախնդիրների շարքում կոռուպցիան 2010թ. ըստ կարևորության զբաղեցրել է 6-րդ տեղը:
- Սակայն կոռուպցիան առաջին տեղն է զբաղեցնում այն հիմնախնդիրների ցանկում, որոնք կարելի է լուծել պետական քաղաքականության միջոցով:
- 2010թ. հարցվածների մեծամասնության (82%) կարծիքով կոռուպցիան լուրջ հիմնախնդիր է երկրի համար: Հարցվածների մոտավորապես երկու երրորդը կոռուպցիան համարում է կենցաղային իրողություն: Միաժամանակ, հարցվածներն առանձնապես հույսեր չեն փայփայում երկրում կոռուպցիան կրճատելու կամ վերացնելու հնարավորության վերաբերյալ:
- 2010թ., հարցվածների ընկալմամբ, կոռուպցիայի մակարդակը, կաշառք պահանջելու հաճախականությունը և պահանջված կաշառքների չափերն աճել են:
- Հարցվածների մոտավորապես կեսը համարում է, որ կոռուպցիան ավելի շատ է տարածված բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում, քան միջին օղակի և ցածրաստիճան պաշտոնյաների: Սակայն, 2009թ. համեմատությամբ 2010թ. բարձրաստիճան պաշտոնյաները սակավ կոռումպացված են համարվել:
- Առավել կոռումպացված հաստատություններն են համարվել դատախազությունը և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ կոմունալ, համայնքային ծառայությունները և կապի ոլորտը համարվել են գրեթե չկոռումպացված:
- Հարցվածների կարծիքով, կոռուպցիան առավել տարածված է առողջապահության, ընտրական, կրթության, ճանապարհային ոստիկանության, առհասարակ ոստիկանության համակարգերում, ինչպես նաև հարկային ու մաքսային ծառայություններում: 2010թ. ամենակոռումպացված ոլորտը համարվել է առողջապահության համակարգը, որին հետևել են կրթության ոլորտը և ընտրական համակարգը:
- Հարցվածները նշել են, որ Հայաստանում իրենք սովորաբար ներքաշվում են կոռուպցիոն դեպքերի մեջ, որովհետև դա խնդիրներ լուծելու միակ ուղին է, որ նպաստում է գործընթացներն արագացնելուն: Իսկ կոռուպցիոն փաստերի վերաբերյալ

իրավասու մարմիններին չեն հայտնում, որովհետև չեն հավատում, թե հայտնելուց հետո ինչ-որ քայլեր կձեռնարկվեն, և որովհետև կոռուպցիայի մասին հայտնելը հասարակայնորեն մերժելի է համարվում:

- Հարցվածներից կաշառք տալու պատրաստակամություն ունեցողների բաժինը գրեթե երեք անգամ գերազանցել է կաշառք վերցնելու պատրաստակամություն ունեցողների բաժինը: Յուրաքանչյուր երրորդ հարցված կիրաժարվեր թե՛ կաշառք տալուց, և թե՛ վերցնելուց: Յուրաքանչյուր 5-րդ հարցված պատրաստ է թե՛ տալ և թե՛ վերցնել կաշառք:
- Կաշառք վերցնելու հիմնական պատճառների մեջ ավելի հաճախ նշվել են դրա ընդհանուր գործելակերպ լինելը և դրամի կարիքը: Իսկ կաշառք տալու հիմնական պատճառ է համարվել այն մտայնությունը, որ օրինական ճանապարհով հնարավոր չէ խնդիրներին լուծում տալ:
- Հարցվածների մեծամասնությունը հավատացած է եղել, որ իրենք ի վիճակի չեն հաղթահարելու կոռուպցիան: Նրանք նաև հավատացած են, որ կոռուպցիան հաղթահարելու առավել ընդունելի ձևը դրանից գերծ մնալն է:
- Հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին հանրային իրազեկությունը շարունակում է մնալ ցածր: ՀԿ-ները ոչ միայն հայտնի չեն, այլև չեն վայելում հանրության վստահությունը: Մինչդեռ, ՀԿ-ների կողմից ղեկավարվող Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների մասին իրազեկվածների թիվը նկատելիորեն ավելացել է:
- Հարցվածների 80%-ը տեղյակ չէ Հայաստանի կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների մասին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագիրը հանդիսացող Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները (ՀՌԿԿ) ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) շրջանակում Հայաստանի տնային տնտեսություններում անցկացրել է երեք հետազոտություն: Տնային տնտեսությունների առաջին հետազոտությունն անցկացվել է 2008թ. աշնանը, Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (Այ Էֆ Ի Էս) հետ գործակցությամբ: Երկրորդ հետազոտությունն անցկացրել է ՀՌԿԿ-ն 2009 աշնանը, իսկ երրորդը՝ 2010թ. աշնանը: Այս հետազոտությունները հետամուտ էին պարզելու հայաստանցիների ընկալումները մի շարք այնպիսի խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են կոռուպցիան, կոռուպցիոն երևույթներին առնչվելու անձնական փորձը, կոռուպցիայի նկատմամբ հանրային և անհատական վարքագծի դրսևորումները, երկրում իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին տեղեկացվածությունը և դրանց գնահատումը, կոռուպցիային առնչվող տեղեկություններ ստանալու նպատակով լրատվամիջոցների օգտագործումը:

2008թ. հետազոտությանը մասնակցել են 1549, 2009-ին՝ 1515, իսկ 2010-ին՝ 1528 հարցվածներ: Հետազոտությունն անցկացվել է Հայաստանի բոլոր մարզերի ընտրական տարիքի (18 տարեկան և բարձր) բնակչության շրջանում: Բնակչության բոլոր խմբերը հավասար հավանականությամբ ընդգրկվելու նպատակով բոլոր երեք հետազոտությունների ժամանակ օգտագործվել է շերտավորված բազմաստիճան քլաստերային պատահական ընտրանքի մեթոդաբանությունը՝ ապահովելով հետազոտության արդյունքների ներկայացուցչականությունն ըստ բնակավայրերի տիպի (մայրաքաղաք, այլ քաղաքներ և գյուղական վայրեր):

Զեկույցում ներկայացված են ԱՄՆ ՄԶԳ ՀԳՄԾ շրջանակում 2010թ. Հայաստանի տնային տնտեսություններում կոռուպցիայի վերաբերյալ անցկացված հետազոտության հիմնական արդյունքները՝ չորս գլուխներով: Վերջին տարիներին կոռուպցիայի մասին հանրային կարծիքի և վարքագծի փոփոխությունները բացահայտելու նպատակով օգտագործվել են նաև կոռուպցիայի վերաբերյալ տնային տնտեսություններում 2008թ. և 2009թ. անցկացված հետազոտությունների արդյունքները:¹ Զեկույցի առաջին գլխում ներկայացվել են հետազոտության այն հիմնական արդյունքները, որ վերաբերում են Հայաստանում տիրող տնտեսական և ընդհանուր իրավիճակի մասին հանրային

¹ Այդ հետազոտությունների վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, ներառյալ տվյալադարանները, գտնվում են ՀՌԿԿ-Հայաստանի կայքում՝ www.crrc.am:

կարծիքին: Գլխում քննարկվել են նաև երկրի առջև ծառացած հիմնախնդիրների վերաբերյալ եղած ընկալումները: Երկրորդ գլխում տեղ են գտել կոռուպցիայի ու դրա տարածվածության ընկալումները Հայաստանում: Այստեղ քննության է առնվել կոռուպցիան որպես առօրյա երևույթ և ներկայացվել է տարբեր հաստատություններում, ոլորտներում և պաշտոնատարների շրջանում կոռուպցիայի մակարդակի՝ հանրության տված գնահատականը: Երրորդ գլուխում անդրադարձ է կատարվել կոռուպցիոն երևույթներին առնչվելու՝ հարցվածների անձնական փորձին, ինչպես նաև կոռուպցիայի հանդեպ դրսևորած նրանց վարքագծին ու գործելակերպին: Այստեղ քննության են առնվել նաև կոռուպցիոն գործելակերպի շարժառիթները: Չորրորդ գլխում ներկայացվել է հանրության իրազեկությունը կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի կոչված տարբեր հաստատությունների գործունեության մասին: Քննարկվել են նաև այդ նախաձեռնությունների արդյունավետության ընկալումները: Ի լրումն, այս գլուխը գնահատականներ է պարունակում կոռուպցիայի վերաբերյալ ունեցած տեղեկատվության հիմնական աղբյուրների, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցների մասին: Հավելվածում ներկայացված են ընտրանքային հետազոտության համառոտ մեթոդաբանությունը, ինչպես նաև մանրամասն աղյուսակային տվյալներ և 2010թ. հետազոտության մի քանի խաչաձև աղյուսակներ:

ՀՌԿԿ-Հայաստանի անձնակազմն իր շնորհակալությունն է հղում բոլոր նրանց, ովքեր ավանդ են բերել այս զեկույցի պատրաստմանը՝ Նաիրուհի Զրբաշյանին, Գայանե Ղուկասյանին, Ռուբեն Եզանյանին, Հանս Գուրբրոդին, Ռոբիա Չարլզին, ինչպես նաև նվիրումով աշխատած խմբավարներին, զրուցավարներին և կամավորներին:

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԾԻՔՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

2010թ. հարցվածների մեծամասնությունը (81 տոկոսը) բավարարված չէ Հայաստանում տիրող ընդհանուր իրավիճակից, ընդ որում չբավարարվածների բաժինը 2008-2010թթ. ընթացքում զգալիորեն ավելացել է: Չբավարարվածների տեսակարար կշիռը Երևանում՝ այլ քաղաքների և գյուղական վայրերի համեմատ ամենաբարձրն է: Միաժամանակ, հարցվածների մեծամասնությունը (58 տոկոսը) շարունակաբար չի հետաքրքրվում քաղաքականությամբ և կառավարման համակարգի խնդիրներով: 2010թ. քաղաքականության և կառավարման համակարգի հանդեպ հետաքրքրության սակավացումը 2009թ.-ի համեմատ ավելի ընդգծված է եղել գյուղական վայրերում:

2010թ. հարցվածների մեծամասնությունը (58 տոկոսը) երկրի տնտեսական իրավիճակը գնահատել է որպես որոշ չափով վատ և շատ վատ, ընդ որում այս կարծիքն ունեցողների բաժինը 2008-2010թթ. ընթացքում աճել է: Այլ քաղաքների բնակիչների և գյուղաբնակների համեմատ, երևանաբնակ հարցվածներն ավելի շատ են մտահոգված տնտեսական իրավիճակով:

Հարցվածների կարծիքով, Հայաստանի առջև ծառացած ամենալուրջ հիմնախնդիրները տնտեսական բնույթի են. ներկայումս ամենից ավելի մտահոգող խնդիրների շարքում մատնանշվել են գործազրկությունը, գնաճը, աղքատությունը, ընդհանուր տնտեսական հիմնախնդիրները և ցածր եկամուտները կամ աշխատավարձերը երկրում: Ըստ կարևորության, 2010թ. կոռուպցիան համարվել է վեցերորդ կարևոր հիմնախնդիրը, մինչդեռ 2008-ից 2010թթ. ընկած ժամանակամիջոցում գնաճն ավելի է կարևորվել:

Հայաստանում տիրող ընդհանուր իրավիճակի ընկալումները


Հայաստանի ընդհանուր իրավիճակից բավարարված չէ հարցվածների մեծամասնությունը և չբավարարվածների բաժինը զգալիորեն աճել է:

2010թ. հետազոտության մասնակիցների մոտ 81 տոկոսը բավարարված չէ Հայաստանի ընդհանուր իրավիճակով (Գծապատկեր 1):² Այս գծապատկերը ներկայացնում է բոլորովին չբավարարվածներին (45 տոկոս) և որոշ չափով չբավարարվածներին (36

2 Բոլոր աղյուսակների և գծապատկերների աղբյուրը ՀԳՄԾ շրջանակում Հայաստանի տնային տնտեսություններում 2008, 2009 կամ 2010 թթ. անցկացված հետազոտությունների տվյալներն են:

տոկոս): 2010 թ. բոլորովին չբավարարվածների տեսակարար կշիռը 2008թ. համեմատ 10 տոկոսային կետով աճել է: Հայաստանի ընդհանուր իրավիճակով լիովին կամ մասամբ բավարարվածների բաժինը նույն ժամանակամիջոցում գրեթե կիսով չափ նվազել է՝ 2010թ. կազմելով միայն 17 տոկոս, մինչդեռ 2008թ. այն 36 տոկոս է եղել: Լիովին բավարարված մարդկանց բաժինը մնացել է աննշան՝ 1-2 տոկոս:


Գծապատկեր 1. Հայաստանի ընդհանուր իրավիճակից բավարարվածությունը 2008, 2009, 2010թթ. (բաժինը բոլոր հարցվածների մեջ, տոկոս³)



Երկրի ընդհանուր իրավիճակով չբավարարվածների բաժինը 2010թ. ամենաբարձրն է եղել Երևանում, որտեղ բոլորովին կամ մասամբ բավարարված չի եղել հարցվածների մոտ 85 տոկոսը, մինչդեռ այլ քաղաքներում և գյուղական վայրերում այդ բաժինը համապատասխանաբար կազմել է 80 և 77 տոկոս (Գծապատկեր 2): Կարելի է ենթադրել, որ չնայած գյուղաբնակների ավելի ցածր կենսամակարդակին, նրանց ակնկալիքներն ավելի քիչ են, իսկ տեղեկատվությունը մայրաքաղաքի համեմատ նվազ մատչելի է:

³ Այսուհետև բերվող գծապատկերների և աղյուսակների համար ես, եթե այլ նշում չկա, հիմնականում օգտագործվել են բոլոր հարցվածների թվում այս կամ այն խմբի տեսակարար կշիռը տոկոսներով:

Գծապատկեր 2. Հայաստանի ընդհանուր իրավիճակից բավարարվածությունը Երևանում, այլ քաղաքային և գյուղական վայրերում 2010թ. (բաժինը բոլոր հարցվածների մեջ ըստ բնակավայրի տիպի, տոկոս)



Երկրի ընդհանուր իրավիճակից կանայք փոքր-ինչ ավելի դժգոհ են եղել, քան տղամարդիկ. բոլորովին կամ մասամբ բավարարված չի եղել 2010թ. հարցված կանանց 81 տոկոսը, մինչդեռ տղամարդկանց՝ 77 տոկոսը:

Ինչպես երևում է Աղյուսակից 1-ից, երկրի ընդհանուր իրավիճակից բավարարվածությունը երիտասարդների շրջանում ավելի բարձր է: 2010թ. բավարարվածության ամենաբարձր մակարդակը գրանցվել է 18-29 տարեկանների (22 տոկոս) և 30-39 տարեկանների (21 տոկոս) տարիքային խմբերում (Աղյուսակ 1), մինչդեռ 40 տարեկանից բարձր տարիք ունեցողների միայն 17-19 տոկոսն է բավարարված եղել երկրի ընդհանուր իրավիճակով:

Աղյուսակ 1. Հայաստանի ընդհանուր իրավիճակով բավարարվածությունը 2010թ., ըստ տարիքային խմբերի (բաժինը յուրաքանչյուր տարիքային խմբում, տոկոս)


Տարիքային խմբեր, տարի	Ընդամենը կամ որոշ չափով բավարարվածներ	Բոլորովին և որոշ չափով չբավարարվածներ
18-29	22	78
30-39	21	79
40-49	17	83
50-59	18	82
60 և ավելի բարձր	19	81
Ընդամենը	18	81

Հետաքրքրվածությունը քաղաքականությամբ և կառավարման համակարգով

Հարցվածների մեծամասնությունը շարունակաբար հետաքրքրվածություն չի դրսևորում քաղաքականության և կառավարման համակարգի նկատմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցվածների մի ծանրակշիռ մասը բավարարված չէ Հայաստանի ընդհանուր իրավիճակով, հարկ է անդրադառնալ քաղաքականության և կառավարման համակարգի նկատմամբ նրանց ունեցած հետաքրքրվածության մակարդակին: 2008-2010 թվականներին հարցվածների կեսից ավելին շարունակաբար որևէ հետաքրքրություն չի ցուցաբերել (առանձնապես չի հետաքրքրվել և բոլորովին չի հետաքրքրվել) քաղաքականության և կառավարման համակարգին առնչվող հարցերի նկատմամբ (58, 57 և 58 տոկոսը՝ համապատասխանաբար 2008թ., 2009թ. և 2010թ., Գծապատկեր 3): Միևնույն ժամանակ, բոլորովին չհետաքրքրվողների բաժինը 2010թ. կազմել է բոլոր հարցվածների ավելի քան մեկ երրորդը (34 տոկոս), 2009թ. համեմատ աճելով մոտ 6 տոկոսային կետով:


Գծապատկեր 3. Քաղաքականությամբ և կառավարման համակարգով հետաքրքրվածությունը 2008, 2009 և 2010թթ.



Արված հետազոտությունների տվյալները ցույց են տալիս, որ քաղաքականության և կառավարման համակարգին առնչվող հարցերի նկատմամբ հետաքրքրվածությունը սակավացել է այլ քաղաքային և գյուղական վայրերում: Հետաքրքիր է, որ քաղաքականության և կառավարման համակարգի նկատմամբ հետաքրքրվածության մակարդակի առումով 2010թ. էական տարբերություններ չեն դիտվել Երևանի, այլ քաղաքների և գյուղական վայրերի միջև (Գծապատկեր 4): Ըստ 2009թ. հետազոտության արդյունքների, Երևանում հարցվածները մի տարի առաջ նվազ անտարբեր էին: Բոլորովին

չհետաքրքրվողների բաժինը 2009թ. Երևանում կազմել էր 21 տոկոս, այլ քաղաքային վայրերում՝ 33 տոկոս, իսկ գյուղական վայրերում՝ 32 տոկոս: 2010թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 35, 35 և 33 տոկոս: 2009թ. համեմատ, 2010թ. անտարբերների բաժինը Երևանում ավելացել է 14 տոկոսային կետով:

Գծապատկեր 4. Քաղաքականությամբ և կառավարման համակարգով հետաքրքրվածությունը 2010թթ., ըստ բնակավայրերի տիպի



Քաղաքականության և կառավարման նկատմամբ հետաքրքրվածությունը բացահայտվել է նաև ըստ սեռատարիքային խմբերի: Արդյունքները ցույց են տալիս, որ կանանց համեմատ տղամարդիկ ավելի շատ են հետաքրքրվում քաղաքականության և կառավարման հարցերով: Քաղաքականության և կառավարման համակարգի խնդիրները որոշ չափով կամ մեծապես հետաքրքրել են 2010թ. հարցված տղամարդկանց մոտ 45 տոկոսին, մինչդեռ կանանց՝ 39 տոկոսին: Այսպիսի տարբերություն գրանցվել էր նաև 2009թ.: Սակայն նշված հարցերով հետաքրքրվող տղամարդկանց բաժինը 2010թ.նախորդ տարվա համեմատ նվազել է 4 տոկոսային կետով, իսկ կանանց բաժինը մնացել է նույնը:

2010թ. հարցված երիտասարդներն ավելի քիչ հետաքրքրվածություն են ցուցաբերել քաղաքականության և կառավարման հարցերի նկատմամբ: Ինչպես ակներև է Աղյուսակ 2-ից, 18-29 և 30-39 տարեկանների տարիքային խմբերի հարցվածների միայն մոտ մեկ երրորդը՝ համապատասխանաբար 34 և 32 տոկոսն է հետաքրքրվում քաղաքականությամբ և կառավարման համակարգով: 40-49 տարեկանների տարիքային խմբում հետաքրքրվածների բաժինը կազմել է 37 տոկոս, 50-59 տարեկանների տարիքային խմբում՝ 46 տոկոս և 60 և ավելի տարիքային խմբում՝ 52 տոկոսը:

Աղյուսակ 2. 2010թ. քաղաքականությամբ և կառավարման համակարգով հետաքրքրվածությունն ըստ տարիքային խմբերի (բաժինը յուրաքանչյուր տարիքային խմբում, տոկոս)

Տարիքային խմբեր, տարի	Շատ կամ որոշ չափով հետաքրքրվածներ	Առանձնապես կամ բոլորովին չհետաքրքրվածներ
18-29	34	66
30-39	32	68
40-49	37	63
50-59	46	54
60 և ավելի բաժր	52	48
Ընդամենը	41	59


Նրանք, ովքեր 2010թ. բավարարված չեն եղել երկրի ընդհանուր իրավիճակով, հիմնականում չեն հետաքրքրվել քաղաքական և կառավարման հարցերով (քաղաքականությամբ չհետաքրքրվողների 83 տոկոսը բավարարված չի եղել երկրի ընդհանուր իրավիճակով): Թեև հարկ է նշել, որ նույնիսկ քաղաքականությամբ հետաքրքրվողների շրջանում երկրի իրավիճակով չբավարարվածների բաժինը ծանրակշիռ է (78 տոկոս):

Հայաստանի տնտեսական իրավիճակի ընկալումները

Հայաստանի տնտեսական իրավիճակի վերաբերյալ բացասական ընկալումներ ունեցող մարդկանց թիվը զգալիորեն աճել է. նրանք մեծամասնություն են կազմել:


Ինչպես երևում է Գծապատկեր 5-ից, 2010թ. հարցվածների մոտ 59 տոկոսը երկրի տնտեսական իրավիճակը գնահատել է որպես որոշ չափով կամ շատ վատ, ընդ որում շատ վատ է գնահատել նրանց 35 տոկոսը: 2008-ից մինչև 2010թթ. ընկած ժամանակամիջոցում տնտեսական իրավիճակի բացասական ընկալումներ ունեցող հարցվածների բաժինն ավելացել է 16 տոկոսային կետով: Տնտեսական իրավիճակը որոշ չափով լավ կամ շատ լավ գնահատածների բաժինը շարունակում է մնալ ցածր. 2008թ. այն կազմում էր 7 տոկոս, իսկ 2009-ին՝ 6 տոկոս: Այս ցուցանիշը նվազելով՝ 2010թ. հասել է 4 տոկոսի: 2010թ. հարցվածներն ավելի բացասական վերաբերմունք են հանդես բերել տնտեսական իրավիճակը գնահատելիս, իսկ այն հարցվածների բաժինը, ովքեր տնտեսական իրավիճակը գնահատել են որպես ոչ լավ, ոչ վատ, նշված ժամանակահատվածում նվազել է 14 տոկոսային կետով:

Գծապատկեր 5. Հայաստանի ընթացիկ տնտեսական իրավիճակի ընկալումը 2008, 2009 և 2010թթ.



2010թ. հետազոտությամբ բացահայտվել են Հայաստանում առկա տնտեսական իրավիճակով բավարարվածության մակարդակի զգալի տարբերություններն ըստ տարածաշրջանների: 2010թ. երկրի տնտեսական իրավիճակով հատկապես մտահոգված են եղել երևանաբնակները (Գծապատկեր 6): Երևանում հարցվածների 67 տոկոսը երկրի տնտեսական իրավիճակը գնահատել է որպես որոշ չափով վատ և շատ վատ, իսկ այլ քաղաքներում և գյուղական վայրերում նույն կարծիքին են եղել հարցվածների համապատասխանաբար 58 և 54 տոկոսը: Միևնույն ժամանակ, տնտեսական իրավիճակը որպես որոշ չափով լավ կամ շատ լավ գնահատողները գրեթե հավասարապես փոքրաթիվ են եղել (4-5 տոկոս) Երևանում, այլ քաղաքներում և գյուղական վայրերում:

Գծապատկեր 6. Հայաստանի ընթացիկ տնտեսական իրավիճակի ընկալումը Երևանում, այլ քաղաքներում և գյուղական վայրերում, 2010թ.



Տնտեսական իրավիճակի մասին մտահոգությունները տարբեր են եղել նաև ըստ սեռատարիքային խմբերի: 2010թ. հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ այն տղամարդկանց ավելի շատ է մտահոգում, քան կանանց: Հարցված տղամարդկանց մոտ 64 տոկոսը երկրի տնտեսական իրավիճակը գնահատել է որպես որոշ չափով վատ, մինչդեռ նույն կարծիքին է եղել կանանց 57 տոկոսը:

Աղյուսակ 3-ի տվյալներից ակնհայտ է, որ 2010թ. տնտեսական խնդիրները համեմատաբար քիչ են մտահոգել երիտասարդներին. հարցված երիտասարդների միայն 47 տոկոսն է տնտեսական իրավիճակը որոշ չափով վատ կամ շատ վատ որակել: Տնտեսական իրավիճակը որոշ չափով լավ կամ շատ լավ համարողների բաժինն ըստ տարիքային խմբերի քիչ է տարբերվում և շատ ցածր է (3-6 տոկոս, Աղյուսակ 3):


Աղյուսակ 3. Հայաստանի ընթացիկ տնտեսական իրավիճակի ընկալումն ըստ տարիքային խմբերի, 2010թ. (բաժինը յուրաքանչյուր տարիքային խմբում, տոկոս)

Տարիքային խմբերը, տարի	Զատ լավ և որոշ չափով լավ	Զատ վատ կամ որոշ չափով վատ	Ոչ լավ, ոչ վատ
18-29	6	47	47
30-39	5	57	38
40-49	3	59	38
50-59	3	67	30
60 և ավելի տարեկան	4	67	29
Ընդամենը	4	59	36

Հայաստանի տնտեսական իրավիճակը վատ և շատ վատ է համարել ընդհանուր իրավիճակով բոլորովին և որոշ չափով չբավարարվածների 69 տոկոսը: Բոլոր հարցվածների մեջ բավական ցածր՝ ընդամենը 20 տոկոս է ընդհանուր իրավիճակով լիովին կամ ավելի շուտ բավարարվածների բաժինը: Ընդ որում, վերջիններիս մեծամասնությունը (63 տոկոսը) նշել է, որ տնտեսական իրավիճակը ոչ լավ է, ոչ վատ:

Ըստ հարցվածների, երկրի առջև ծառացած ամենաէական խնդիրները տնտեսական բնույթ ունեն: Հայաստանի առջև ծառացած երեք ամենակարևոր հիմնախնդիրներն առանձնացնելիս 2010թ. հարցվածները ամենից ավելի հաճախ հիշատակել էին գործազրկությունը (բոլոր երեք պատասխանների գրեթե 69 տոկոսը), այնուհետև՝ գնաճը և բարձր գները (43 տոկոս), աղքատությունը (34 տոկոս) և ընդհանուր տնտեսական խնդիրները (22 տոկոս): Բոլոր հարցվածների 13 տոկոսը կոռուպցիան համարել է Հայաստանի առջև ծառացած հիմնական խնդիրներից մեկը: Առհասարակ, 2010թ. տնտեսական բնույթի խնդիրները, զբաղեցնելով առաջին հինգ տեղերը, համարվել են շատ ավելի խնդրահարույց, քան սոցիալական և քաղաքական խնդիրները (Գծապատկեր 7): Հիմնախնդիրների տեղակարգումը մնացել է գրեթե նույնը, ինչ 2008թ. և 2009թ., ընդ որում գործազրկությունը մնացել է առաջին տեղում:

Գծապատկեր 7. Հայաստանի առջև ծառացած հիմնական խնդիրները (տոկոս, յուրաքանչյուր հարցված կարող էր տալ մինչև երեք պատասխան)



Ծանոթություն. 2008 և 2009թթ. «ցածր եկամուտ/աշխատավարձ» տողի վերաբերյալ տվյալներ չկան:

2010թ. գնաճը համարվել է ավելի կարևոր խնդիր, քան 2008թ. և 2009թ. (Գծապատկեր 7): Գնաճը, որպես Հայաստանում կարևոր հիմնախնդիր, 2010թ. շատ ավելի սուր է ընկալվել, քան 2009թ.: Եթե 2009թ. հարցվածների միայն 20 տոկոսն է գնաճը համարել լուրջ հիմնախնդիր, ապա 2010թ.՝ 43 տոկոսը (կամ 23 տոկոսային կետով ավելին): Այս տեղաշարժի արդյունքում գնաճը, որ 2009թ. համարվել էր Հայաստանում չորրորդ ամենակարևոր հիմնախնդիրը, 2010թ. նշվել էր որպես երկրորդ հիմնախնդիրը:

Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրների ցանկում կոռուպցիան առաջին տեղն է զբաղեցնում այն հիմնախնդիրների ցանկում, որոնք կարելի է լուծել թիրախավորված քաղաքականության միջոցով: Տնտեսական հիմնախնդիրների փաթեթից

հետո Կոռուպցիան շատ ավելի կարևոր հիմնախնդիր է համարվել, քան հանրային քաղաքականության հետ կապված այլ խնդիրները, օրինակ՝ առողջապահական, կենսաթոշակային համակարգերը կամ կրթությունը (Գծապատկեր 7):

ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

2008-2010թթ. հարցվածների ճնշող մեծամասնության կարծիքով կոռուպցիան Հայաստանում շարունակում է մնալ շատ լուրջ հիմնախնդիր: Կոռուպցիան լուրջ հիմնախնդիր է համարել 2010թ. հետազոտությամբ հարցվածների մոտ 82 տոկոսը՝ ներառյալ այն շատ լուրջ հիմնախնդիր համարողների 60 տոկոսը: Ընդ որում, երևանաբնակներն ավելի հաճախ են կոռուպցիան մատնանշել որպես լուրջ հիմնախնդիր, քան այլ քաղաքներում և գյուղական վայրերում հարցվածները: 2010թ. հարցվածների մոտ երկու երրորդը համամիտ է եղել այն մտքին, որ կոռուպցիան Հայաստանում առօրյա փաստ է: 2010թ. այդպես կարծողների բաժինը 14 տոկոսային կետով ավելի է եղել, քան 2008թ.:

Հարցվածների կարծիքով աճել են թե՛ կոռուպցիայի մակարդակն առհասարակ, թե՛ կաշառք պահանջելու հաճախականությունը և թե՛ պահանջվող գումարների չափը: Նախորդ տարվա համեմատ կոռուպցիայի մակարդակի աճում հավատացած են եղել 2010թ. հարցվածների ավելի քան մեկ երրորդը (37 տոկոսը) կամ երկու անգամ ավելի շատ, քան 2008թ.: 2010թ. հարցվածների գրեթե մեկ երրորդը (30 տոկոսը) մատնանշել է կաշառք պահանջելու դեպքերի հաճախականության աճ: 2010թ. հարցվածների մոտ 36 տոկոսը նշել է, որ նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է որպես կաշառք պահանջվող գումարների չափը ևս:

Միևնույն ժամանակ, հարցվածներն ավելի հոռետես են դարձել երկրում կոռուպցիան կրճատելու կամ վերացնելու հնարավորություն տեսնելու առումով: Թեև հարցվածների զգալի մասը (50, 51 և 46 տոկոսը՝ համապատասխանաբար 2008, 2009 և 2010թթ.) հավատացած են եղել, որ կոռուպցիայի մակարդակը կարելի է որոշակիորեն կրճատել, 2010թ. հարցվածների 32 տոկոսը նշել է, որ կոռուպցիան առհասարակ հնարավոր չէ կրճատել: 2008թ. համեմատ 2010թ. այդպես կարծողների բաժինը 10 տոկոսով ավելի է եղել: Հարցված երևանաբնակները 2010թ. սակավ լավատես են եղել:

Հարցվածներին խնդրել էին կարծիք հայտնել զանազան հաստատություններում և հիմնարկներում առկա կոռուպցիայի մակարդակի մասին: Հարցվածների գրեթե կեսն այն կարծիքին է եղել, որ կոռուպցիան առավել տարածված է բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում: Սակայն վերջիններս 2010թ. կոռուպցիոն գործընթացներում ավելի քիչ են ներգրավված համարվել, քան 2009թ.: Կոռուպցիան մեծապես տարածված է համարվել դատարաններում, դատախազությունում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովում (ԿԸՀ): 2010թ. հետազոտությամբ հարցվածների 64 տոկոսն է կոռումպացված համարել դատախազությունը և դատարանները, իսկ ԿԸՀ-ի կոռումպացվածության մասին նշել է 60 տոկոսը:


Հաստատություններում և հիմնարկներում առկա կոռուպցիայից բացի, հարցվածներին խնդրել էին նաև կարծիք հայտնել ծառայությունների տարբեր ոլորտներում կոռուպցիայի առկայության մասին: Ըստ հետազոտության արդյունքների, կոռուպցիան առավել տարածված է առողջապահության ոլորտում, ընտրական համակարգում, կրթության ոլորտում, ճանապարհային ոստիկանությունում, ընդհանուր ոստիկանությունում, հարկային և մաքսային ծառայություններում: 2010թ. հարցվածների մոտ 68 տոկոսը հավատացած է եղել, որ կոռուպցիան շատ տարածված կամ տարածված է առողջապահության համակարգում: Ամենակոռումպացված ոլորտների ցանկում առողջապահությանը հետևել են ընտրական համակարգը (66 տոկոս), կրթությունը (62 տոկոս), ճանապարհային ոստիկանությունը (57 տոկոս), հարկային ծառայությունը (58 տոկոս), ընդհանուր ոստիկանությունը (57 տոկոս) և մաքսային ծառայությունը (54 տոկոս):

Հայաստանում կոռուպցիայի գնահատումը

Հարցվածների ճնշող մեծամասնությունը կոռուպցիան Հայաստանում շատ լուրջ հիմնախնդիր է համարել:


Հարցվածներին խնդրել էին գնահատել Հայաստանում կոռուպցիայի կարևորությունը կամ լրջությունը: 2010թ. հետազոտությամբ հարցվածների ճնշող մեծամասնությունը (82 տոկոսը) նշել է, որ կոռուպցիան լուրջ հիմնախնդիր է, ընդ որում 60 տոկոսն այն համարել է շատ լուրջ, իսկ 22 տոկոսը՝ որոշ չափով լուրջ հիմնախնդիր (Գծապատկեր 8): Սակայն կոռուպցիան լուրջ հիմնախնդիր համարողների բաժինը տարեցտարի փոքր-ինչ նվազել է. համեմատության համար նշենք, որ 2008թ. այդպես են համարել 2008թ. և 2009թ. հարցվածների համապատասխանաբար 87 և 84 տոկոսը: 2010թ. հարցվածների միայն 15 տոկոսն է այն կարծիքին եղել, որ կոռուպցիան այնքան էլ լուրջ հիմնախնդիր չէ կամ ամենևին էլ լուրջ հիմնախնդիր չէ: Այս թվերը 2008թ. և 2009թ. համեմատ փոքր-ինչ աճել են:

Գծապատկեր 8. Հայաստանում կոռուպցիայի՝ որպես հիմնախնդրի լրջության գնահատումը




Ինչպես երևում է Գծապատկեր 9-ից, երևանաբնակ հարցվածներն ավելի են հակված կոռուպցիան ընկալելու որպես լուրջ հիմնախնդիր, քան այլ քաղաքների և գյուղական վայրերի բնակիչները: 2010թ. մայրաքաղաքում հարցվածների 86 տոկոսն է կոռուպցիան համարել շատ կամ որոշ չափով լուրջ հիմնախնդիր երկրում: Այլ քաղաքներում և գյուղական վայրերում այս թիվը կազմում է համապատասխանաբար 83 և 76 տոկոս (Գծապատկեր 9): Այսպիսով, գյուղական վայրերի և այլ քաղաքների բնակիչների կարծիքները սակավ վատատեսական են: Այս հարցի վերաբերյալ հարցված տղամարդկանց և կանանց կարծիքները համանման են եղել: Էական տարբերություններ չեն եղել նաև տարիքային խմբերի կարծիքների միջև:

Գծապատկեր 9. Հայաստանում կոռուպցիայի՝ որպես հիմնախնդրի լրջության գնահատումը Երևանում, այլ քաղաքներում և գյուղական վայրերում, 2010թ. (բաժինը բոլոր հարցվածների մեջ ըստ բնակավայրի տիպի, տոկոս)




2010թ. հարցվածների մոտ երկու երրորդը համաձայնել է, որ հայաստանցիները կոռուպցիան համարում են առօրեական երևույթ (Գծապատկեր 10): Հարցվածների 65 տոկոսը համամիտ է եղել այն մտքի հետ, որ կոռուպցիան Հայաստանում առօրեական երևույթ է, իսկ 32 տոկոսը չի կիսել այդ միտքը: Կոռուպցիան երկրում առօրյա փաստ համարողների բաժինը 2008թ. համեմատ 2010թ. աճել է 14 տոկոսային կետով:

Գծապատկեր 10. Համամիտ էք այն մտքին, որ Հայաստանի քաղաքացիները կոռուպցիան համարում են առօրեական երևույթ



Կոռուպցիան առօրեական երևույթ լինելու մտքի հետ ավելի հաճախ են համաձայնել Երևանում հարցվածները, քան այլ քաղաքներում և գյուղական վայրերում 2010թ. հարցվածները (Գծապատկեր 11): 2010թ. հետազոտությամբ հարցված երևանաբնակների մոտ 72 տոկոսն է նշել, որ կոռուպցիան երկրում կենցաղային փաստ է, մինչդեռ այլ քաղաքներում և գյուղական վայրերում այդպես են նշել համապատասխանաբար 66 և 57 տոկոսը: Միևնույն ժամանակ, էական տարբերություն չի գրանցվել կանանց և տղամարդկանց, ինչպես նաև տարբեր տարիքային խմբերի արտահայտած կարծիքների միջև:


Գծապատկեր 11. Համամիջին էք այն մտքին, որ կոռուպցիան Հայաստանում առօրեական երևույթ է (բաժինը բոլոր հարցվածների մեջ ըստ բնակավայրի տիպի, տոկոս)



Հարցվածների կարծիքով աճել են թե՛ կոռուպցիայի մակարդակն առհասարակ, թե՛ կաշառք պահանջելու հաճախականությունը և թե՛ պահանջվող գումարների չափը:


2008-2010թթ. ընթացքում հարցվածների թվում զգալիորեն աճել է նրանց բաժինը, ովքեր համարել են, որ կոռուպցիայի մակարդակը նախորդ տարվա համեմատ նկատելիորեն բարձր է: 2010թ. հարցվածների ավելի քան մեկ երրորդը (37 տոկոսը) նշել է, որ նախորդ տարվա համեմատ կոռուպցիայի մակարդակն աճել է (շատ կամ որոշ չափով): Այս թիվը ավելի քան երկու անգամ գերազանցել է 2008թ. մակարդակը (17 տոկոս): Միևնույն ժամանակ, մոտ կիսով չափ նվազել է այն մարդկանց բաժինը (14 տոկոս՝ 2008թ. 30 տոկոսի դիմաց), ովքեր նշել են, որ կոռուպցիայի մակարդակը էականորեն կամ որոշ չափով է նվազել: 2008, 2009 և 2010թթ. հարցվածների համապատասխանաբար 37, 38 և 35 տոկոսը կոռուպցիայի մակարդակի առումով որևիցե փոփոխություն չի նկատել (Գծապատկեր 12): Այսպիսով, կարծիքները բավականին տարազան են: 2010թ. տվյալների դիտարկումն ըստ հարցվածների սեռատարիքային կազմի ցույց է տալիս, որ նշված հարցում կարծիքների տարբերությունը տարբեր սեռերի տարիքային խմբերի միջև էական չէ:

Գծապատկեր 12. Ինչպիսի՞ն է կոռուպցիայի ներկայիս մակարդակը Հայաստանում նախորդ տարվա համեմատ




2010թ. հարցվածների մեկ երրորդը (30 տոկոսը) նշել է, որ նախորդ տարվա համեմատ կաշառք պահանջելու դեպքերի հաճախականությունը էականորեն կամ որոշ չափով աճել է. ի դեպ, այդ թիվը ներառում է հարցվածների այն 15 տոկոսը կազմողներին, ում կարծիքով կաշառք պահանջելու դեպքերը էականորեն են աճել (Գծապատկեր 13): Հարցվածների ևս մեկ երրորդը (32 տոկոսը) նշել է, որ կաշառք պահանջելու դեպքերի հաճախականությունը մնացել է նույնը, իսկ 14 տոկոսն էլ նշել է, որ այն էականորեն կամ որոշ չափով նվազել է: Այսպիսով, այս հարցում նույնպես կարծիքները տարաբնույթ են: Այդուհանդերձ, 2008թ. համեմատ, 2010թ. կրկնապատկվել է նրանց բաժինը (30 տոկոս՝ 2010թ. և 15 տոկոս՝ 2008թ.), ովքեր համարում են, որ կաշառք պահանջելու դեպքերի հաճախականությունը այս կամ այն չափով աճել է: Միևնույն ժամանակ նվազել է նրանց տեսակարար կշիռը, ովքեր համարում են, որ կաշառք պահանջելու դեպքերի հաճախականությունը նվազել է (2010թ. նրանց բաժինը կազմել է 14 տոկոս, մինչդեռ 2008թ. 29 տոկոս էր):

Գծապատկեր 13. Ինչպե՞ս է փոխվել կաշառք պահանջելու դեպքերի հաճախականությունը նախորդ տարվա համեմատ



2010թ. հարցվածների մոտ 36 տոկոսը նշել է, որ նախորդ տարվա համեմատ աճել է պահանջվող կաշառքի գումարների չափը (Գծապատկեր 14): Ըստ հարցվածների 18 տոկոսի, պահանջվող գումարների չափն աճել է որոշ չափով, մինչդեռ մյուս 18 տոկոսի կարծիքով այն էականորեն է աճել: Հարցվածների գրեթե մեկ երրորդը (29 տոկոսը) նշել է, որ գումարների չափերը մնացել են նույնը: Հարցվածների մնացած մասը (14 տոկոսը) նշել է, որ գումարները նվազել են: 2009թ. հետազոտության արդյունքների համեմատ, 2010թ. 7 տոկոսային կետով ավելացել է այն մարդկանց բաժինը, ովքեր համարում են, որ պահանջվող կաշառքների գումարներն աճել են:

Գծապատկեր 14. Ինչպե՞ս է փոխվել ներկայումս պահանջվող կաշառքների գումարը նախորդ տարվա համեմատ




Երկրում առկա կոռուպցիան կրճատելու կամ վերացնելու հնարավորության առումով հարցվածներն ավելի հոռետես են դարձել:

2010թ. հարցվածների գրեթե մեկ երրորդը (32 տոկոսը) նշել է, որ կոռուպցիան երկրում առհասարակ հնարավոր չէ վերացնել (Գծապատկեր 15): Հարցվածների 46 տոկոսը նշել է, որ այն կարելի է նվազեցնել միայն որոշ չափով և միայն 17 տոկոսն է ասել, որ այն կարելի է էականորեն կրճատել կամ լիովին վերացնել: 2009թ. այս պատկերը փոքր-ինչ սակավ հոռետեսական էր (համապատասխանաբար՝ 28, 51 և 15 տոկոս): Հետաքրքիր է, որ 2008թ. հարցվածների միայն 22 տոկոսն էր բացառել կոռուպցիայի կրճատման հնարավորությունը: Այսպիսով, այս հարցի վերաբերյալ 2010թ. հոռետեսական կարծիք ունեցողների բաժինը 2008թ. համեմատ աճել է 10 տոկոսային կետով: Ուստի, նվազել է լավատեսական մտայնություն ունեցողների բաժինը, բայց ավելի քիչ չափով (5 տոկոսային կետով): Պետք է նշել, որ հարցվածների ծանրակշիռ մասը (50, 51 և 46 տոկոսը՝ համապատասխանաբար 2008, 2009 և 2010թթ.) այն հաստատ համոզմանն է, որ կոռուպցիայի մակարդակը երկրում կարելի է որոշակիորեն նվազեցնել:

2010թ. հարցված երևանաբնակները սակավ լավատեսական կարծիքներ են արտահայտել: Նրանց միայն 12 տոկոսն է նշել, որ կոռուպցիան կարելի է էականորեն կրճատել կամ վերացնել, մինչդեռ նույն ցուցանիշն այլ քաղաքներում կազմել է 21, իսկ գյուղական վայրերում՝ 18 տոկոս: Երևանում հարցվածների 38 տոկոսը նշել է, որ կոռուպցիան առհասարակ հնարավոր չէ վերացնել՝ ի տարբերություն այլ քաղաքներում և գյուղական վայրերում արձանագրված համապատասխանաբար 28 և 26 տոկոսի:

Գծապատկեր 15. Հայաստանում կոռուպցիան որքանո՞վ կարող է կրճատվել



Կոռուպցիայի մակարդակի ընկալումները տարբեր հաստատություններում, ոլորտներում և պաշտոնյաների շրջանում


Հարցվածների ընկալմամբ, կոռուպցիայի մակարդակը բարձր է դատարաններում, դատախազությունում և Կենտրոնական ընտրական հանձնաժողովում:

Ի պատասխան տարբեր պետական հաստատություններում և հիմնարկներում կոռուպցիայի մակարդակը գնահատելու խնդրանքի, 2010թ. հետազոտությամբ հարցվածների մոտ 64 տոկոսը մեծապես (37 տոկոս) կամ որոշ չափով (27 տոկոս) կոռումպացված է համարել դատախազությունը և դատարանները (Գծապատկեր 16): ԿԸՀ-ն նույնպես ընկալվում է որպես երկրի առավել կոռումպացված մարմիններից մեկը (հարցվածների 60 տոկոսը), ընդ որում հարցվածների 35 տոկոսը նշել է այն որպես մեծապես, իսկ 25 տոկոսը՝ որոշ չափով կոռումպացված: ԿԸՀ-ին հետևում են իրավապահ մարմինները (57 տոկոս) և նախարարությունները (56 տոկոս): Ցանկում հաջորդը մարզային իշխանության մարմիններն են՝ մարզպետարանները, այնուհետև՝ կառավարության աշխատակազմը և Ազգային Ժողովը, որոնց հարցվածների համապատասխանաբար 52, 48 և 47 տոկոսը համարում է մեծապես կամ որոշ չափով կոռումպացված:⁴ Ցանկում եղած այլ հաստատություններ ու հիմնարկներ նույնպես ընկալվել են որպես կոռումպացված, բայց ավելի ցածր հաճախականությամբ: Պետք է նշել, որ պատասխանից հրաժարված կամ «չգիտեմ» պատասխանը տվածների բաժինը որոշ հաստատությունների պարագայում բավականին մեծ է: Նախագահի աշխատակազմի, Երևանի քաղաքապետարանի, Քաղծառայության խորհրդի և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համար պատասխանների 45-52 տոկոսը եղել է «չգիտեմ» կամ «հրաժարվում եմ պատասխանել»: Մինչ բոլոր հարցվածների 41 տոկոսը Նախագահի աշխատակազմն ընկալում է որպես կոռումպացված, նրանց ավելի քան մեկ երրորդը (37 տոկոսը) կամ չգիտի կամ հրաժարվել է պատասխանել այս հարցին: Իրավիճակը համանման է Երևանի քաղաքապետարանի պարագայում. հարցվածների 40 տոկոսի ընկալմամբ քաղաքապետարանը կոռումպացված է, բայց 45 տոկոսն էլ կա'մ «չգիտեմ» պատասխանն են տվել, կա'մ հրաժարվել պատասխանից: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը միակ հաստատությունն է, որը չկոռումպացված համարողների բաժինը (43 տոկոս) երկու անգամ գերազանցել է կոռումպացված համարողների բաժնին (22 տոկոս): 2008-2010թթ. ընթացքում հարցվածների մեծամասնությունը (58-66 տոկոսը)

⁴ Մարզպետարանը տեղական իշխանության մարմինն է յուրաքանչյուր մարզում: Մարզպետներին նշանակում է Նախագահը:

առավել կոռումպացված է համարել դատախազությունը, դատարանները, ԿԸՀ-ն և իրավապահ (կատարածու) մարմինները: Այս հարցի առնչությամբ 2009 և 2010թթ. տվյալների տարբերությունները մեծ չեն:

Գծապատկեր 16. Կոռուպցիայի մակարդակի գնահատումն ըստ հաստատությունների և ծառայությունների, 2010թ.



Տարբեր հաստատությունների կոռումպացվածության գնահատականներն ըստ հարցվածների բնակավայրի տիպի ցույց են տալիս (Աղյուսակ 4), որ երևանաբնակները մյուսների համեմատ ավելի հաճախ են նշված հաստատությունները որոշ չափով կամ մեծապես կոռումպացված համարում: Առավել տեսանելի տարբերությունը ի հայտ է գալիս Երևանի քաղաքապետարանի դեպքում: Երևանաբնակ հարցվածների մեծամասնությունը (62 տոկոսը) այն կարծիքին է եղել, որ Երևանի քաղաքապետարանը մեծապես կամ որոշ չափով կոռումպացված է, իսկ այլ քաղաքներում և գյուղական վայրերում հարցվածների համապատասխանաբար 32 և 26 տոկոսն է այդպես համարել: Միևնույն ժամանակ, երևանաբնակ հարցվածները նաև ավելի հոռետես են եղել տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանների առնչությամբ:

Աղյուսակ 4. Որոշ հաստատությունների մեծապես կամ մասամբ կոռումպացված լինելու ընկալումները Երևանում, այլ քաղաքներում և գյուղական վայրերում (բաժինը բոլոր հարցվածների մեջ ըստ բնակավայրի տիպի, տոկոս, 2010թ.)


Հաստատություններ	Բոլորը	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղական վայրեր
Դատախազություն	64	74	62	58
Դատարաններ	64	74	61	57
Կենտրոնական ընտրական հանձնաժողով	60	71	60	51
Իրավապահ մարմիններ	57	69	54	49
Նախարարություններ	56	64	56	50
Մարզային իշխանության մարմիններ	52	61	52	44
Կառավարության աշխատակազմ	48	53	50	41
Ազգային Ժողով	47	50	48	44
Տեղական ինքնակառավարման մարմիններ	44	58	46	29
Նախագահի աշխատակազմ	42	44	44	38
Երևանի քաղաքապետարան	40	62	32	26
Քաղաքացիական ծառայության խորհուրդ	30	38	31	21
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	30	38	28	22
Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	22	26	23	18

Հարցվածների գրեթե կեսն այն կարծիքին է, որ կոռուպցիան առավել տարածված է բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում

2010թ. և 2009թ. հարցումների համադրությունը ցույց է տալիս, որ բարձրաստիճան պաշտոնյաները 2010թ. ավելի նվազ չափով են ներգրավված համարվել կոռուպցիոն գործընթացներում: Հարցվածներին խնդրել էին պատասխանել, թե պետական հատվածի որ մակարդակի (բարձրաստիճան, միջին օղակի և ցածրաստիճան) պաշտոնյաների շրջանում է կոռուպցիան առավել տարածված: 2010թ. հարցվածների գրեթե կեսը (49 տոկոսը) նշել է, որ կոռուպցիան առավել տարածված է բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում, 26 տոկոսը նշել է, որ այն առավել հաճախ է հանդիպում միջին օղակի պաշտոնյաների շրջանում և միայն 6 տոկոսն է հավատացած եղել, որ կոռուպցիան առավել հաճախ է հանդիպում ցածրաստիճան պաշտոնյաների շրջանում: Սա ցույց է տալիս, որ Հայաստանում առկա մտայնությունն այն է, որ կոռուպցիան ավելի շուտ վերևից ներքև


ուղղվածությունն ունի, քան հակառակը: Բոլոր մակարդակների պաշտոնյաների շրջանում կոռուպցիայի տարածվածության աստիճանը նույնն են համարել 2010թ. հարցվածների 13 տոկոսը: Սակայն բարձրաստիճան պաշտոնյաներին կոռումպացված համարողների տեսակարար կշիռը 2009թ. համեմատ մոտ 10 տոկոսային կետով նվազել է: Միևնույն ժամանակ նվազել է նաև միջին օղակի պաշտոնյաների շրջանում կոռուպցիան առավել տարածված համարողների բաժինը (Գծապատկեր 17):

Գծապատկեր 17. Կոռուպցիայի տարածվածությունն ըստ պաշտոնյաների դիրքի




Ի պատասխան պետական պաշտոնյային կաշառք տալու առավել հաճախ հանդիպող սցենարների մասին հարցին, 2010թ. հարցվածների մոտ 35 տոկոսը նշել է, որ նախապես հայտնի է, թե ինչպես և որքան պետք է վճարեն ու դա չի քննարկվում (Գծապատկեր 18): Հարցվածների 34 տոկոսն ընտրել է այն տարբերակը, ըստ որի պաշտոնյան ակնարկում կամ պահանջում է վճարում կատարել, իսկ 21 տոկոսն էլ նշել է, որ մարդիկ իրենց կամքով և հայեցողությամբ են առաջարկում կաշառքը: Այս թվերը 2010թ. գրեթե նույնն են եղել ինչ 2008թ., բացի սեփական հայեցողությամբ վճար առաջարկելու սցենարից. 2008թ. համեմատ վերջինս 6 տոկոսային կետով ավելի հաճախ է նշվել:

Գծապատկեր 18. 2008, 2009 և 2010թթ. պետական պաշտոնյաներին կաշառք տալու առավել հաճախ հանդիպող սցենարները



2010թ. հարցվածների մեծամասնությունը (61 տոկոսը) համարել է, որ պետական հիմնարկների աշխատակիցներին կաշառք տալը ցածր ռիսկ պարունակող գործողություն է: Ընդ որում, նրանց 17 տոկոսը միանգամայն վստահ է, որ եթե վճարեն, ապա կստանան ակնկալվող ծառայությունը, իսկ 44 տոկոսը որոշակիորեն է վստահ այդ հարցում (Գծապատկեր 19): Սակայն 2010թ. հարցվածների մեկ երրորդը (33 տոկոսը) վստահ չի եղել վերջնական արդյունքի վերաբերյալ, ընդ որում, 9 տոկոսը բացարձակապես անվստահ է եղել: Կաշառք տալով ցանկալի արդյունքը ստանալու վստահություն արտահայտածների բաժինը տարեցտարի բավական հաստատուն է եղել, իսկ վստահություն չունեցողների բաժինը 2008թ. համեմատ 2010թ. աճել է 5 տոկոսային կետով (28 տոկոսից հասնելով 33 տոկոսի):

Գծապատկեր 19. 2008, 2009 և 2010թթ. կաշառքի դիմաց ծառայություններ ստանալու վստահությունը




Ըստ հարցվածների, կոռուպցիան առավել տարածված է առողջապահության ոլորտում, ընտրական համակարգում, կրթության ոլորտում, ճանապարհային ոստիկանությունում և ընդհանուր ոստիկանությունում, ինչպես նաև հարկային ու մաքսային ծառայություններում:

Հետազոտությամբ հարցվածներին խնդրել էին գնահատել Հայաստանում կոռուպցիայի տարածվածությունն ըստ ոլորտների և ծառայությունների: 2010թ. հետազոտության արդյունքներով կոռուպցիան առավել տարածված է համարվել առողջապահության համակարգում, ընտրական համակարգում, կրթության ոլորտում, ճանապարհային և ընդհանուր ոստիկանությունում, ինչպես նաև հարկային և մաքսային ծառայություններում (Գծապատկեր 20): Հենց այս ոլորտներն են ամենահաճախը հանդիպել «տարածված է» և «շատ տարածված է» պատասխաններում: Հարցվածների 68 տոկոսը հավատացած է, որ կոռուպցիան շատ կամ բավականին տարածված է առողջապահության համակարգում, որին հետևում են ընտրական համակարգը (66 տոկոս), կրթության ոլորտը (62 տոկոս), ճանապարհային ոստիկանությունը (57 տոկոս), հարկային ծառայությունը (58 տոկոս), ընդհանուր ոստիկանությունը (57 տոկոս) և մաքսային ծառայությունը (54 տոկոս):

Ի հակադրություն վերը նշվածի, հարցվածների մեծամասնությունը կոռուպցիան հազվադեպ կամ իսպառ բացակա է համարել կոմունալ ծառայությունների (օր.՝ ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում) և կապի (օր.՝ հեռախոսակապ, համացանց) ոլորտներում, համայնքային ծառայություններում (օր.՝ աղբահանություն, թույլտվությունների տրամադրում) և եկեղեցիում: 2010թ. հարցվածների 83 տոկոսը հավատացած է, որ կոռուպցիան հազվադեպ երևույթ է կամ բացակայում է կոմունալ ծառայությունների ոլորտում, 80 տոկոսը՝ կապի ոլորտում, 79 տոկոսը՝ համայնքային ծառայություններում և 73 տոկոսը՝ եկեղեցիում: Մոտ 51 տոկոսը նշել է, որ կոռուպցիան հազվադեպ է հանդիպում կամ առհասարակ բացակայում է սոցիալական ապահովության ծառայություններում, մինչդեռ 36 տոկոսը հավատացած է եղել, որ կոռուպցիան այդ ոլորտում լայնորեն տարածված երևույթ է: Հարցվածների 56 և 46 տոկոսը հավատացած է, որ կոռուպցիան հազվադեպ երևույթ է համապատասխանաբար զանգվածային լրատվամիջոցներում և ՀԿ-ներում:

Գծապատկեր 20. Կոռուպցիայի մակարդակի ընկալումներն ըստ ոլորտների և ծառայությունների, 2010թ.



2009թ. և 2010թ. հետազոտությունների արդյունքների միջև եղած հիմնական տարբերությունները հետևյալն են: Տարբեր ոլորտներում և ծառայություններում կոռուպցիայի տարածվածության տեսանկյունից առողջապահությունը տեղակարգման ցանկում 2009թ. 2-րդ տեղից (61 տոկոս) 2010թ. տեղափոխվել է 1-ին տեղը: Կրթությունը 5-րդ տեղից (56 տոկոս) տեղափոխվել է 3-րդ տեղ, իսկ ոստիկանությունը՝ 3-րդ տեղից (58 տոկոս)՝ 6-րդ տեղ:

Հարցվածներին խնդրել են նաև նշել միայն երեք առավել կոռումպացված ծառայություններն ու ոլորտները Հայաստանում: 2010թ. երկրի առավել կոռումպացված երեք ոլորտներն են համարվել առողջապահությունը, կրթությունը և ընտրական համակարգը: Ըստ 2010թ. հարցվածների գնահատականների, առողջապահության

համակարգն ընկալվել է որպես առաջին ամենակոռումպացված ոլորտը (հարցվածների 45 տոկոսը), երկրորդ ամենակոռումպացվածն է համարվել կրթական համակարգը (հարցվածների 31 տոկոսը), իսկ երրորդը՝ ընտրական համակարգը (հարցվածների 28 տոկոսը): Պատկերը գրեթե նույնն էր 2009թ., երբ առաջին և երկրորդ տեղերում կրկին նշվել էին առողջապահությունը (33 տոկոս) և կրթական համակարգը (24 տոկոս), իսկ երրորդ տեղում՝ դատարանները (23 տոկոս): Առավել կոռումպացված ոլորտների մատնանշման առումով տարբերություններ չեն արձանագրվել Երևանում, այլ քաղաքներում և գյուղական վայրերում հարցվածների շրջանում:

Կոռուպցիոն վարքագծի ընկալումները


Հայաստանցիների մեծամասնությունն ընդհանուր առմամբ հասկանում է «կոռուպցիա» եզրույթի իմաստը:

Կոռուպցիա բառի ընկալումը գնահատելու նպատակով հարցվածներին առաջարկվել է գործողությունների մի ցանկ, խնդրելով որակել, թե արդյոք դրանք կոռուպցիոն դրսևորումներ են (Գծապատկեր 21): 2008-2010թթ. հարցվածների գերակշիռ մեծամասնությունը որպես կոռուպցիա է բնութագրել հետևյալ գործողությունները. շահեկան դատավճիռ ստանալու համար դատավորին վճարելը (96 տոկոս), վարորդական իրավունքի վկայականը չառգրավելու համար ոստիկանության աշխատակցին վճարելը (91 տոկոս), քննությունների ժամանակ դասախոսին նվեր տալը (82 տոկոս), մերձավորին զինվորական ծառայությունից ազատելու համար անձնական կապերի օգտագործումը (72 տոկոս) և կենսաթոշակներ բաժանելիս ոչ պաշտոնական փոքր գումարներ վճարելը (71 տոկոս): Այսպիսով, թվարկված գործողությունները հստակ կերպով ընկալվում են որպես կոռուպցիա:

Համեմատաբար նվազ թվով հարցվածներ կոռուպցիոն դրսևորումներ են համարել նաև այլ կարգի գործողությունները: Օրինակ, հարցվածների համապատասխանաբար 68 և 61 տոկոսը նշել է, որ կոռուպցիոն դրսևորումներ են բուհ ընդունվելու հարցում պետական պաշտոնյայի կողմից ազգականին օգնելը կամ որևէ նախարարությունում ազգականին պաշտոնի երաշխավորելը: Հատուկ խնամք ստանալու համար բժշկին նվեր տալու հարցում կարծիքները տարաբաժանվել են. հարցվածների 58 տոկոսը դա համարել է կոռուպցիա, իսկ 40 տոկոսը՝ ոչ: Հարցվածների միայն 43 տոկոսն է նշել, որ պետական հիմնարկների աշխատակիցների կողմից հիմնարկի ավտոմեքենան անձնական նպատակներով օգտագործելը կոռուպցիայի դրսևորում է: 2009 և 2010թթ. հանրային կարծիքի մեջ տեղի

ունեցած էական փոփոխություններն այն են, որ 2010թ. ավելի մեծ թվով մարդիկ են նշել, որ կենսաթոշակները բաժանելիս ոչ պաշտոնական փոքր գումարներ վճարելը կոռուպցիա է (71 տոկոս՝ ի տարբերություն 2009թ. 63 տոկոսի) և որ հատուկ խնամքի դիմաց բժշկին նվեր տալը կոռուպցիա է (58 տոկոս՝ ի տարբերություն 2009թ. 47 տոկոսի):

Գծապատկեր 21. Նշված գործողություններ կոռուպցիայի դրսևորում համարելու հաճախությունները 2008, 2009, 2010թթ. (“այո” պատասխանների բաժինը, տոկոս ամբողջի մեջ)



ԳԼՈՒԽ 3. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

Հարցվածների ավելի քան կեսն այն կարծիքին է, որ Հայաստանում մարդիկ սովորաբար ներգրավվում են կոռուպցիոն գործողությունների մեջ, որովհետև դա խնդիրներ լուծելու միակ ուղին է և որովհետև այն նպաստում է գործընթացներն արագացնելուն: Հարցվածների թվում կաշառք տալուն հակվածների թիվը գրեթե երեք անգամ գերազանցում է կաշառք վերցնելու հակվածություն ունեցողների թվին: Հարցվածների ավելի քան կեսը նշել է, որ անհրաժեշտության դեպքում կաշառք կտա: Միևնույն ժամանակ, հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (73 տոկոսը) նշել է, որ կհրաժարվեր առաջարկված կաշառքից: Ընդ որում, կանայք ավելի հաճախ են նշել, որ կհրաժարվեն իրենց առաջարկված կաշառքից (75 տոկոս), քան տղամարդիկ (69 տոկոս): Մինչդեռ կաշառք տալու պատրաստակամություն հայտնաբերողների ներկայացվածությունը հարցված կանանց և տղամարդկանց թվում գրեթե նույնն է:

Կաշառք ընդունելու պատրաստակամություն հայտնաբերողների մեծամասնությունն իր դիրքորոշումը պատճառաբանել է նյութական կարիքով (47 տոկոս) և այն բանով, որ դա ընդունված գործելակերպ է (36 տոկոս): Հարցվածների մեծամասնությունը կաշառք տալու պատրաստակամությունը բացատրել է այլընտրանք չունենալով: Կաշառք տալու հակվածության հիմնական պատճառն այն է, որ մարդիկ իրենց խնդիրը չեն կարող լուծել օրինական ճանապարհով, ուստի արդյունքի հասնելու համար ստիպված են կաշառք տալ: Ովքեր նշել են, որ կհրաժարվեն կաշառք տալուց, բացատրել են, որ դա իրենց համար անընդունելի է (56 տոկոս): Ովքեր ասել են, որ չեն ընդունի առաջարկված կաշառքը, իրենց դիրքորոշումը հիմնավորել են գերազանցապես բարոյական նկատառումներով՝ դա անընդունելի համարելով իրենց համար (76 տոկոս):

Կաշառքի նկատմամբ վերաբերմունքի վրա հիմնվելով՝ հարցվածների մեկ երրորդին կարելի է դասել «հակակոռուպցիոն ներուժ» ներկայացնող խմբին և միայն 17 տոկոսին՝ «կոռուպցիան սատարողների» խմբին: Եթե «հակակոռուպցիոն ներուժը» կանանց ու տղամարդկանց շրջանում գրեթե նույն մասնաբաժնով է ներկայացված, ապա տղամարդկանց շրջանում «կոռուպցիան սատարողներն» ավելի մեծ ներկայացվածություն ունեն (22 տոկոս), քան կանանց շրջանում (16 տոկոս):

Հարցվածների մեծամասնությունը հավատացած է, որ չի կարող ակտիվ դիրք գրավել երկրում կոռուպցիայի դեմ պայքարի հարցում: Օրինակ, հարցվածների 84 տոկոսը նշել է, որ անձնապես ոչինչ չի կարող անել Հայաստանում կոռուպցիան կրճատելու համար:

Հարցվածներն ընդհանուր առմամբ խուսափում են նաև հայտնել կոռուպցիայի դեպքերի մասին: Որպես կոռուպցիայի դեպքերի մասին չհայտնելու պատճառներ 2010թ. հարցվածներն ամենից ավելի հաճախ նշել են, որ վստահ չեն, թե կոռուպցիայի մասին հայտնելուց հետո ինչ-որ բան կձեռնարկվի, ինչպես նաև այն, որ կոռուպցիայի մասին հայտնելը հասարակայնորեն անընդունելի է:

Թեպետ առողջապահության համակարգն ընկալվում է որպես ամենակոռումպացվածը, այդ համակարգի հետ առնչված հարցվածների միայն 22 տոկոսն է նշել, որ բախվել է կաշառքի պահանջի: Կաշառք տալու դեպքերի մեծ մասը (75 տոկոսը) տեղի է ունեցել երկրորդային և երրորդային օղակի բուժհաստատություններում (հիվանդանոց կամ կլինիկա): Մինչդեռ, կոմունալ ծառայությունում և կապի ոլորտի հիմնարկներում հազվադեպ է պատահել, որ մարդկանցից կաշառք պահանջեն. վերջիններիս հետ առնչված մարդկանց միայն մեկ տոկոսն է նշել, որ իրենք որոշակի ոչ պաշտոնական վճարումներ են կատարել: Կրթական և սոցիալական ապահովության համակարգերի հետ առնչված մարդկանց միայն 10 տոկոսն է նշել, որ իրենցից կաշառք են պահանջել:


Կոռուպցիայի հիմնական դրդապատճառները

Հարցվածների ավելի քան կեսը նշել է, որ մարդիկ սովորաբար ներգրավվում են կոռուպցիոն հարաբերությունների մեջ, որովհետև դա հարցերը լուծելու միակ ուղին է և որովհետև դա օգնում է արագացնելու գործընթացները:

Հարցվածները նշել են Հայաստանում կոռուպցիայի հիմքում ընկած մինչև երեք հիմնական դրդապատճառ: Բոլոր պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ կոռուպցիայի առավել տարածված շարժառիթն այն է, որ մարդիկ չեն կարողանում իրենց խնդիրները լուծել առանց դրա (2008-2010թթ. բոլոր երեք պատասխանների մոտ 31-32 տոկոսը): Կոռուպցիայի երկրորդ ամենատարածված դրդապատճառը գործընթացներն արագացնելու անհրաժեշտությունն է (այսինքն՝ բյուրոկրատական գործընթացների վրա ծախսվող ժամանակի կրճատման անհրաժեշտությունը): Այս պատասխանի հաճախականությունը 2010թ. փոքր-ինչ աճել է՝ կազմելով 28 տոկոս, մինչդեռ 2008թ. և 2009թ. համապատասխանաբար 23 և 24 տոկոս է եղել (Գծապատկեր 22): Երրորդ հաճախակի հանդիպող շարժառիթը (2010թ. բոլոր պատասխանների 13 տոկոսը) պատժից կամ պատժամիջոցներից խուսափելն է համարվել:

2010թ. ավելի փոքր հաճախականությամբ են նշվել այնպիսի պատճառներ, ինչպիսիք են շահեկան կամ արտոնյալ վերաբերմունքի արժանանալը (8 տոկոս), ավելի բարձր պաշտոնական վճարումներից խուսափելը (7 տոկոս) և եկամտի այլընտրանքային աղբյուր ունենալը (5 տոկոս): Կոռուպցիոն գործելակերպի դրդապատճառների հարցում կանանց և տղամարդկանց, ինչպես նաև տարբեր տարիքային խմբերի արտահայտած կարծիքներն էականորեն չեն տարբերվել:

Գծապատկեր 22. Որո՞նք են կոռուպցիոն գործելակերպի հիմնական շարժառիթները 2008, 2009, 2010թթ. (բաժինը բոլոր 3 պատասխանների մեջ, տոկոս)




Հարցվածների շրջանում կաշառք տալու հակվածություն ունեցողների տեսակարար կշիռը շուրջ երեք անգամ ավելի է, քան կաշառք վերցնելու հակվածություն ունեցողներին:

Հարցվածներին խնդրել էին պատասխանել, թե ինչպես կարձագանքեին կաշառք վերցնելու կամ տալու առաջարկին (Գծապատկեր 23ա և 23բ): 2010թ. հարցվածների ավելի քան կեսը (58 տոկոսը) պատասխանել է, որ չի խուսափի կաշառք տալուց և պատրաստակամ է կաշառք տալ, եթե դրա կարիքն առաջանա: Միևնույն ժամանակ,


հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (73 տոկոսը) նշել է, որ կիրառարվի առաջարկված կաշառքից: 2008-2009թթ. ընթացքում կաշառք վերցնելու հակվածություն ունեցողների և չունեցողների ներկայացվածությունը հարցվածների ընդհանուր թվում կայուն է եղել: Հարցվածների թվում կաշառք տալու պատրաստակամություն հայտնաձևների բաժինը նույն ժամանակամիջոցում 5 տոկոսային կետով աճել է: 2010թ. հարցվածների ընդամենը 21 տոկոսն է նշել, որ կընդունի առաջարկված կաշառքը, իսկ 37 տոկոսը նշել է, որ կաշառք չի տա: Վերջիններիս տեսակարար կշիռը 2010թ. փոքր-ինչ նվազել է:

2010թ. տվյալների վերլուծությունը վկայում է, որ կանայք ավելի քիչ են հակված կաշառք վերցնելու, քան տղամարդիկ. հարցված կանանց 75 տոկոսը նշել է, որ կիրառարվի առաջարկված կաշառքը վերցնելուց, մինչդեռ տղամարդկանց շրջանում այդպիսիք կազմել են 69 տոկոս: Իսկ կաշառք տալու պատրաստակամ կանանց և տղամարդկանց բաժինը բավական մոտ է (57 և 60 տոկոս, համապատասխանաբար):

Գծապատկեր 23ա. Արձագանքը կաշառք ընդունելու առաջարկին 2008, 2009, 2010թթ.



Գծապատկեր 23բ. Արձագանքը կաշառք տալու պահանջին 2008, 2009, 2010թթ.



Ինչպես երևում է աղյուսակ 5-ից, հարցվածների մեծամասնությունը կհամաձայնե՛ր կաշառք վերցնել՝ ելնելով դրամի կարիքից և որովհետև դա ընդունված գործելակերպ է,

միևնույն ժամանակ, նրանք կիրառարվեին կաշառք վերցնելուց՝ ելնելով բարոյական նկատառումներից: Կաշառք վերցնելու կամ տալու առաջարկին հարցվածների դրական կամ բացասական արձագանքների վերլուծությամբ բացահայտվել է հետևյալ պատկերը: Նրանք, ովքեր ասել են, որ չեն ընդունի առաջարկված կաշառքը, իրենց դիրքորոշումը հիմնավորել են գերազանցապես բարոյական նկատառումներով՝ դա անընդունելի համարելով իրենց համար (76 տոկոս թե՛ 2010թ. և թե՛ 2009թ.):

Նրանց ևս 13 տոկոսը 2010թ. և 11 տոկոսը՝ 2008-2009թթ. նշել են, որ իրենք կաշառք չեն վերցնի, քանի որ դա կապված է պատժվելու մեծ ռիսկի հետ: Սրանք կաշառք վերցնելուց հրաժարվելու առավել տարածված հիմնական պատճառներն են, որ կապված են բարոյականության հետ: Միևնույն ժամանակ, 2010թ. կաշառք ընդունելու պատրաստակամություն հայտնաձևների մեծամասնությունն իր դիրքորոշումը պատճառաբանել է նյութական կարիքով (47 տոկոս), և այն բանով, որ դա ընդունված գործելակերպ է (36 տոկոս):

Աղյուսակ 5. Կաշառք վերցնելու և չվերցնելու պատճառների բաշխումը 2008, 2009 և 2010թ.

	Պատճառները	2010թ.	2009թ.	2008թ.
Ինչու՞ կվերցնեիք	Որովհետև բոլորն են վերցնում	36	34	34
	Որովհետև դրամի կարիք ունեմ	47	52	48
	Որովհետև փող սիրում եմ	4	...	2
	Որովհետև մի մասը պարտավոր եմ «վերև» տալ	8	6	7
	Այլ	5	7	7
	Զգիտեմ, հրաժարվում եմ պատասխանել	1	2	2
	Ընդամենը	100	100	100
Ինչու՞ չեիք վերցնի	Որովհետև պատժվելու ռիսկը մեծ է	13	11	11
	Որովհետև դա անընդունելի է ինձ համար	76	76	73
	Կփորձեմ հարցը լուծել օրինական միջոցներով	4	5	6
	Կոռուպցիան կրճատելու (հաղթահարելու) նպատակով	4	6	0
	Այլ	3	1	8
	Զգիտեմ, հրաժարվում եմ պատասխանել	1	1	2
	Ընդամենը	100	100	100

Հարցվածների մեծամասնությունը կհամաձայներ կաշառք տալ, որովհետև ստիպված է դա անել և կիրառարվեր կաշառք տալուց՝ ելնելով բարոյական

նկատառումներից (Աղյուսակ 6): Կաշառք տալուց հրաժարվող հարցվածների մեծամասնությունը (2009թ.՝ 66 տոկոսը և 2010թ.՝ 56 տոկոսը) բացատրել է, որ դա անընդունելի է համարում: Նրանց միայն 11 տոկոսն է 2010թ. նշել (2009թ.՝ 10 տոկոսը), որ կփորձեր խնդիրը լուծել օրինական ուղիներով ու միջոցներով: Սրանք են կաշառք տալուց հրաժարվելու առավել տարածված պատճառները, որ նույնպես կապված են բարոյականության հետ: Միևնույն ժամանակ, կաշառք տալուց չհրաժարվելու հիմնական պատճառը այն արմատավորված մտայնությունն է, որ անհնար է խնդիրները լուծել օրինական ճանապարհով: Այսպիսով, ցանկալի արդյունքի հասնելու համար մարդիկ հարկադրված են կաշառք տալ: Այս փաստարկը բերողների բաժինը կազմել է գերակշիռ մեծամասնություն (2010թ. հարցվածների 71 տոկոսը): 2009թ. համեմատ այս բաժինը նվազել է 8 տոկոսային կետով:

Աղյուսակ 6. Կաշառք տալու և չտալու պատճառների բաշխումը 2008, 2009 և 2010թթ.

		2010թ.	2009թ.	2008թ.
Ինչու՞ կտայիք	Որովհետև բոլորն էլ տալիս են	6	10	8
	Որովհետև այլ կերպ ծառայությունը չեմ ստանա	71	79	77
	Կկարողանամ սակարկել զինը	1	4	8
	Գործընթացն արագացնելու համար	15	0	2
	Որպեսզի համոզված լինեմ, որ կստանամ ակնկալածս	5	0	1
	Այլ	2	5	4
	Զգիտեմ, հրաժարվում եմ պատասխանել	0	1	1
	Ընդամենը	100	100	100
Ինչու՞ չեիք տա	Որովհետև պատժվելու ռիսկը մեծ է	5	8	5
	Որովհետև դա անընդունելի է ինձ համար	56	66	58
	Կփորձեմ հարցը լուծել օրինական միջոցներով	11	10	19
	Որովհետև ես դրամ (միջոցներ) չունեմ	23	6	8
	Այլ	4	9	6
	Զգիտեմ, հրաժարվում եմ պատասխանել	2	2	5
	Ընդամենը	100	100	100

Կոռուպցիայի առնչությամբ անհատական վարքագիծը

Հարցվածների ավելի քան մեկ երրորդին կարելի է համարել «հակակոռուպցիոն ներուժ», մինչդեռ նրանց 17 տոկոսին կարելի է համարել՝ «կոռուպցիան սատարողներ»:

Հիմնվելով կաշառք վերցնելու և տալու առաջարկի հանդեպ իրենց պոտենցիալ արձագանքի վրա՝ հարցվածներին կարելի է բաժանել հետևյալ խմբերի. կաշառք թե՛ վերցնելուն և թե՛ տալուն համաձայն անձինք (այսպես կոչված «կոռուպցիան սատարողներ»), կաշառք վերցնելուն համաձայն, սակայն տալուց հրաժարվող անձինք («կեղծ պրագմատիկներ»), կաշառք տալուն համաձայն, սակայն վերցնելուց հրաժարվող անձինք («պասիվ դերակատարներ») և կաշառք թե՛ տալուց և թե՛ վերցնելուց հրաժարվողներ («հակակոռուպցիոն ներուժ»): Ըստ այս դասակարգման, կոռուպցիան սատարողները 2010թ. և 2009թ. կազմել են համապատասխանաբար 18 և 17 տոկոս, մինչդեռ հակակոռուպցիոն ներուժը կազմել է 33 և 37 տոկոս (Աղյուսակ 7): Այսպիսով, մի կողմից հակակոռուպցիոն ներուժի բաժինը մոտ երկու անգամ ավելի է, քան կոռուպցիան սատարողներինը, իսկ մյուս կողմից՝ վերջիններիս տեսակարար կշիռը բավական կայուն է, մինչդեռ հակակոռուպցիոն ներուժը 2010 թվականին 2009-ի համեմատ փոքր-ինչ (շուրջ 4 տոկոսային կետով) սակավացել է: Կանանց և տղամարդկանց շրջանում հակակոռուպցիոն ներուժի ներկայացվածությունը 2010թ. գրեթե չի տարբերվել (համապատասխանաբար՝ 34 և 32 տոկոս), սակայն կոռուպցիան սատարողների բաժինը տղամարդկանց շրջանում ավելի մեծ է (22 տոկոս), քան կանանց շրջանում (16 տոկոս):


Աղյուսակ 7. Հասարակությունում «հակակոռուպցիոն ներուժի» և «կոռուպցիան սատարողների» ներկայացուցչականությունը՝ կաշառք տալու և վերցնելու նկատմամբ վերաբերմունքը 2009 և 2010թթ.

	2010		2009	
	Ես կաշառք կտայի	Ես կաշառք չեի տա	Ես կաշառք կտայի	Ես կաշառք չեի տա
Ես կաշառք կվերցնեի	18% կոռուպցիան սատարողներ	3% կեղծ պրագմատիկներ	17% կոռուպցիան սատարողներ	3% կեղծ պրագմատիկներ
Ես կաշառք չեի վերցնեի	36% պասիվ դերակատարներ	33% հակակոռուպցիոն ներուժ	32% պասիվ դերակատարներ	37% հակակոռուպցիոն ներուժ

Միևնույն ժամանակ, հարցվածների մեծամասնությունը հավատացած է, որ չի կարող ակտիվ դերակատարում ունենալ երկրում կոռուպցիայի դեմ պայքարում:

Հարցվածներին խնդրել էին նշել, թե իրենք անձնապես ինչ կարող են անել Հայաստանում կոռուպցիան կրճատելու համար: Բոլոր հարցվածների ավելի քան կեսը (2010թ.՝ 53 տոկոսը) նշել է, որ ոչինչ չի կարող անել (Գծապատկեր 24): Պետք է նշել, որ այս պատասխանի մասնաբաժինը 2010 թվականին 2008-ի համեմատ աճել է 11 տոկոսային կետով: 2010թ. հարցվածների 23 տոկոսը նշել է, որ երկրում կոռուպցիայի մակարդակը կրճատելու համար կարող է ձեռնպահ մնալ հանրային ծառայությունների դիմաց կաշառք տալուց, շուրջ 8 տոկոսը նշել է, որ կարող է հրաժարվել պաշտոնյաներին կամ նրանց ազգականներին լավություն անելուց: Այսպիսով, այս հարցին 2010թ. տրված պատասխանների ճնշող մեծամասնությունը (84 տոկոսը) արտացոլում է հարցվածների պասիվ կամ հուսալքված վերաբերմունքը: Միննույն ժամանակ, շատ քիչ թվով հարցվածներ են ցանկանում ավելի մեծ ակտիվություն հանդես բերել՝ կոռումպացված պաշտոնյաների մասին հայտնելով իշխանություններին կամ որևիցե ՀԿ-ի: Նաև քչերն են ցանկանում մասնակցել որևիցե հակակոռուպցիոն կրթական կամ իրազեկման քարոզարշավի:

Գծապատկեր 24. Ի՞նչ կարող եք դուք անձնապես անել Հայաստանում կոռուպցիան կրճատելու համար



Հարցվածների՝ կոռուպցիայի դեպքերի մասին հայտնելու դժկամությունը մասամբ կարելի է բացատրել նրանով, որ մարդիկ տեղեկացված չեն այն մասին, թե ինչպես և ում կարելի է հայտնել նման դեպքերի մասին: 2009 և 2010թթ. հարցվածների միայն 24 տոկոսն է նշել, որ տեղյակ է, թե որևէ պետական պաշտոնյայի կողմից թույլ տված կոռուպցիոն դեպքի մասին որ հաստատություններին է հարկ դիմել:

Կոռուպցիայի փաստերի մասին հայտնելու ցանկություն չունենալու ամենատարածված պատճառը 2010թ. եղել է թերահավատությունն այն բանի նկատմամբ, որ հայտնելուց հետո ինչ-որ քայլեր կձեռնարկվեն և այն մտայնությունը, որ կոռուպցիայի մասին հայտնելը հասարակության մեջ չի խրախուսվում: 2009 և 2010թթ. հարցվածների մոտ 99 տոկոսը հետազոտությանը նախորդող տասներկու ամիսների ընթացքում կոռուպցիայի որևիցե դեպքի մասին չի հայտնել: Ինչպես երևում է Աղյուսակ 8-ից, 2010թ. կոռուպցիայի դեպքերի մասին հայտնելու ցանկության բացակայությունը մեծապես կապված է այն հանգամանքի հետ, որ նույնիսկ կոռուպցիայի մասին հայտնելու պարագայում, իրենց կարծիքով, միևնույն է, ոչինչ չի ձեռնարկվելու: Այդպես կարծողների բաժինը 2010 թվականին կազմել է 76 տոկոս՝ 2008 թվականի 64 տոկոսի դիմաց: Լայնորեն տարածված են եղել նաև կարծիքներն այն մասին, որ հայաստանյան հասարակությունում չի խրախուսվում կոռուպցիայի մասին հայտնելը (2010թ.՝ 72 տոկոս), որ կոռուպցիայի մասին հայտնողներին կպատժեն (57 տոկոս), որ կոռուպցիայի մասին չարժե հայտնել, եթե այն անձնապես չի վնասում (55 տոկոս), ինչպես նաև, որ մարդիկ կոռումպացվում են հիմնականում կարիքից դրդված (43 տոկոս):

Աղյուսակ 8. Կոռուպցիայի դեպքերի մասին չհայտնելու պատճառները 2008, 2009 և 2010 թվականներին

Պատճառները	2010թ.	2009թ.	2008թ.
Կոռուպցիայի մասին հայտնողներին կպատժեն	57	47	47
Եթե նույնիսկ հայտնեմ կոռուպցիայի մասին, միևնույն է, ոչինչ չի ձեռնարկվի	76	69	64
Չարժե կոռուպցիայի մասին հայտնել, եթե անձնապես դրանից չեմ տուժում	55	55	38
Կոռուպցիայի մեջ ներգրավվող շատ մարդիկ դա անում են տնտեսական դժվարությունների պատճառով	43	44	34
Մեր հասարակությունը չի խրախուսում կոռուպցիայի մասին հայտնողներին	72	71	65

Կոռուպցիոն փորձառություն

Հարցվողներին խնդրել էին պատասխանել, թե վերջին 12 ամիսների ընթացքում արդյոք գործ ունեցել են հանրային ծառայությունների տարբեր ոլորտների հետ և արդյոք այդ շփումների ժամանակ նրանց առաջարկել են կաշառք վճարել ծառայությունների դիմաց: 2010թ. հետազոտությամբ հարցվածների մեծամասնությունն առնչվել է կոմունալ ծառայությունների (հարցվածների 72 տոկոսը), կապի ծառայությունների (61 տոկոսը), առողջապահական ծառայությունների (58 տոկոսը), սոցիալական ապահովության (42 տոկոսը) և կրթական համակարգի (40 տոկոսը) հետ: Մնացած հանրային ծառայությունների հետ առնչությունները սահմանափակ են եղել, այսինքն, այդ ծառայությունների վերաբերյալ տվյալների ներկայացուցչականությունը փոքր է:

Կոմունալ և կապի ծառայությունների հետ շփումների ժամանակ մարդկանցից շատ հազվադեպ են կաշառք պահանջել. նշված ծառայություններից օգտված մարդկանց միայն մեկ տոկոսն է նշել, որ որոշակի ոչ պաշտոնական վճարումներ են կատարվել (Աղյուսակ 9): Թեպետ առողջապահության համակարգն ընկալվում է որպես ամենակոռումպացվածը, այդ համակարգին դիմած հարցվածների միայն 22 տոկոսն է նշել, որ իրենցից կաշառք են պահանջել: Կաշառքի պահանջի դեպքերի մեծամասնությունը (75 տոկոսը) բաժին է ընկել երկրորդային և երրորդային առողջապահական հիմնարկներին (համաբուժարաններ և հիվանդանոցներ): Նախորդ 12 ամիսների ընթացքում կրթական և սոցիալական ապահովության համակարգերի հետ առնչվածների միայն 10 տոկոսից են կաշառք պահանջել:

Աղյուսակ 9. Հանրային հատվածի և տարբեր ծառայությունների հետ առնչվելիս կաշառք տալու անձնական փորձառությունը, 2010թ.

	Ծառայություն- ների հետ առնչվածների թիվը, մարդ	Բաժինը հարցվածներ ի թվում, %	Հարցվածների թիվը, որոնցից կաշառք են պահանջել, մարդ
Ճանապարհային ուստիկանություն	260	17	85
Մաքսային մարմիններ	46	3	11
Դատախազություն	26	2	6
Առողջապահություն, բացառությամբ անվճար ծննդոգնության	890	58	194
Դատարաններ	46	3	10
Պետության կողմից երաշխավորված անվճար ծննդոգնություն	218	14	43
Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	26	2	5
Կադաստր	159	10	26
Ոստիկանություն	39	3	5
Լիցենզիաներ, հավաստագրեր, թույլտվություններ տվող հիմնարկներ	24	2	3
Պետոեզիստր	65	4	8
Նոտարական ծառայություն	163	11	19
Կրթություն	615	40	62
Մոցիալական ապահովություն	641	42	63
Հարկային ծառայություն	114	7	11
Զինծառայություն	163	11	9
Կոմունալ ծառայություն	1094	72	11
Կապի ծառայություն	932	61	7

Հարցվողները սեփական փորձի հիման վրա նկարագրել են պետական հատվածում կոռուպցիայի դեպքերի հիմնական սցենարները: 2010թ. հարցվածների 22 տոկոսը նշել է՝ կա'մ բոլոր դեպքերում, կա'մ դեպքերի մեծ մասում պաշտոնյաները ուղղակիորեն կաշառք չպահանջելով, ակնարկում են, որ դրամի, ինչ-որ նվերների կամ լավ վերաբերմունքի ակնկալիքներ ունեն: Եվս 14 տոկոսը նշել է, որ պաշտոնյաներն ուղղակիորեն պահանջում են դրամ, նվեր կամ լավություն: Հարցվածների շուրջ 9 տոկոսը նշել է, որ արտոնյալ վերաբերմունքի արժանանալու համար օգտագործել է անձնական կապերը: Այդուհանդերձ, հարցվածների մեծամասնությունը նշել է, որ իրենք հազվադեպ են առնչվել կամ առհասարակ չեն առնչվել պետական պաշտոնյաներին կաշառք տալու դեպքերի:

ԳԼՈՒԽ 4. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Հարցվածներին խնդրել էին պատասխանել, թե որքանով են տեղյակ տարբեր հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին: Հարցվածների ճնշող մեծամասնությունը տեղյակ չի եղել հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին (2008-2010թթ.՝ հարցվածների 85-87 տոկոսը): Ըստ որում, 2009 և 2010թթ. հարցվածների մոտ 7 տոկոսը նշել է, որ տեղյակ չէ, թե ինչ է նշանակում ՀԿ:

Չնայած հակակոռուպցիոն գործունեության մեջ ներգրավված ՀԿ-ների մասին հարցվածների մեծամասնության անիրազեկությանը՝ 2010թ. հարցվածների մոտ 44 տոկոսը լիովին կամ որոշ չափով համամիտ է, որ ՀԿ-ները ի վիճակի են պայքարել կոռուպցիայի դեմ Հայաստանում: Մոտ 39 տոկոսը չի կիսել այս կարծիքը: Այսպիսով, այս հարցում կարծիքները տարուղղված են:

Ինչ վերաբերում է կոնկրետ հակակոռուպցիոն նախաձեռնություններին՝ 2010թ. հարցվածների մեծամասնությունը (74 տոկոսը) տեղյակ է եղել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ որպես հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող մարմնի մասին: Հարցվածների մոտ կեսը (48 տոկոսը) տեղյակ է եղել Վերահսկիչ պալատի մասին, իսկ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի մասին՝ միայն 14 տոկոսը: Նմանապես, 2010թ. հարցվածների միայն 14 տոկոսն էր լսել Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների (ՇՊԱԿ-ների) մասին: Սակայն մյուս կողմից, 2008թ.-ից 2010թ. ընկած ժամանակամիջոցում ՇՊԱԿ-ների մասին իրազեկ մարդկանց թիվը գրեթե կրկնապատկվել է:

2010թ. հարցվածների 80 տոկոսը նշել է, որ ընդհանուր առմամբ ծանոթ չէ Հայաստանի կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին, և միայն 19 տոկոսն է նշել, որ տեղյակ է այդ նախաձեռնությունների մասին: Իրազեկության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Երևանում (22 տոկոս՝ այլ քաղաքներում գրանցված 19 տոկոսի և գյուղական վայրերում գրանցված 16 տոկոսի դիմաց): Ի լրումն, կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին տեղյակ մարդկանց բաժինը գգալիորեն նվազել է 2008-ից 2010թթ. ընկած ժամանակամիջոցում:

Անկախ կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին տեղեկացվածությունից՝ բոլոր հարցվածներին խնդրել էին գնահատել կոռուպցիայի դեմ կառավարության պայքարի արդյունավետությունը: 2010թ. հարցվածների մոտ մեկ


երրորդը (31 տոկոսը) կոռուպցիայի դեմ կառավարության պայքարը գնահատել է որպես շատ արդյունավետ կամ որոշ չափով արդյունավետ: Հարցվածների մեծամասնությունը (57 տոկոսը) նշել է, որ կոռուպցիայի դեմ կառավարության պայքարը շատ անարդյունավետ կամ որոշ չափով անարդյունավետ է: 2008թ. համեմատ այս ընկալումն ունեցողների բաժինը 2010թ. աճել է մոտ 1,5 անգամ: Հակակոռուպցիոն այլ նախաձեռնությունների առնչությամբ՝ բարձր է գնահատվել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հակակոռուպցիոն գործունեությունը (այդ մասին իրազեկների 46 տոկոսը), իսկ պետական այլ մարմինների պարագայում նման գնահատականները խիստ տարաբնույթ են եղել:

ՀԿ-ների, պետական կազմակերպությունների և մարմինների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկությունը

ՀԿ-ների հակակոռուպցիոն գործունեությունը անհայտ է մնում հարցվածների մեծամասնությանը:

Ինչպես ակներև է Գծապատկեր 25-ից, հարցվածների գերակշիռ մեծամասնությունը տեղյակ չէ հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին: Անտեղյակների բաժինը 2008-2010թթ ընթացքում կայուն է եղել՝ 85-87 տոկոս: 2009թ. և 2010թ. հարցվածների մոտ 7 տոկոսը նշել է, որ տեղյակ չէ, թե ինչ բան է ՀԿ-ն: Չնայած այն հանգամանքին, որ հարցվածների մեծամասնությունը տեղյակ չի եղել հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին, 2010թ. հետազոտությամբ հարցվածների 44 տոկոսը լիովին կամ որոշ չափով համամիտ է, որ ՀԿ-ներն ի վիճակի են Հայաստանում պայքարել կոռուպցիայի դեմ: Միևնույն ժամանակ, հարցվածների 39 տոկոսը համամիտ չէ այս մտքին:

Գծապատկեր 25. Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին իրազեկությունը 2008, 2009 և 2010թթ.



2009թ. և 2010թ. անտեղյակության մակարդակը հավասարապես ցածր էր նաև ըստ բնակավայրերի տեսակների: Քաղաքային վայրերում, մայրաքաղաքում և գյուղական վայրերում հարցվածների 6-9 տոկոսն էր տեղյակ հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին: Կանանց և տղամարդկանց իրազեկության մակարդակների միջև տարբերությունն աննշան՝ 1-2 տոկոսի չափով եղել, իսկ տարիքային խմբերից 30-49 տարեկանները, կարծես թե, ավելի իրազեկ են եղել, քան մյուս տարիքային խմբերը (Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին իրազեկվածությունն ըստ բնակավայրի, տարիքային և սեռային խմբերի (բոլոր հարցվածների թվում, ըստ խմբերի, տոկոս, 2010թ.)

	Անտեղյակներ	Տեղյակներ
Բնակավայրի տիպը		
Երևան	91	7
Այլ քաղաքներ	81	9
Գյուղական վայրեր	85	6
Տարիքային խումբը, տարեկան		
18-29	88	6
30-39	83	9
40-49	83	9
50-59	85	6
60 տարեկան և բարձր	85	5
Սեռը		
Կանայք	86	8
Տղամարդիկ	85	6
Բոլորը	86	7

Հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ՀԿ-ների մասին իրազեկներին խնդրել էին անվանել դրանք: Հարցվածների կողմից նշված 110 ՀԿ-ների ընդհանուր թվից առավել հաճախ էին հիշատակվել Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (21 տոկոս), Երևանի մամուլի ակումբը (15 տոկոս), Թրանսփերենսի Ինթերնեյշնլ (11 տոկոս), Հայաստանի ինֆորմացիայի ազատություն կենտրոնը (8 տոկոս) և Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի հայաստանյան գրասենյակը (8 տոկոս):


Անկախ հակակոռուպցիոն հարցերով զբաղվող ՀԿ-ների մասին տեղեկացվածությունից, հարցվածները պատասխանել են նաև այն հարցին, թե հակակոռուպցիոն ինչ օժանդակություն են ակնկալում ՀԿ-ներից: Նախորդ երկու

տարիների (2008-2009թթ.) նման, 2010թ. հարցվածների մեծամասնությունը (50 տոկոսը) նշել է, որ կուզենար տեղեկատվություն ստանալ կոռուպցիայի առնչությամբ քաղաքացիների իրավունքների մասին: Եվս 31 տոկոսը նշել է, որ կուզենար տեղեկատվություն ստանալ կոռուպցիայի առնչությամբ քաղաքացիների պարտականությունների մասին, իսկ մոտ 27 տոկոսը նշել է, որ կուզենար տեղեկանալ հակակոռուպցիոն օրենսդրությանը: Սրանք հակակոռուպցիոն աջակցության ամենահաճախ հանդիպող ձևերն են, որ 2008-2010թթ. հարցվածներն ակնկալում են ՀԿ-ներից: Ի լրումն, հարցվածների 42 տոկոսը նշել է, որ կոռուպցիայից տուժելու դեպքում կդիմի որևիցե ՀԿ-ի կողմից ղեկավարվող հակակոռուպցիոն կենտրոնի (43 տոկոսը նշել են, որ չեին դիմի):

Հարցվածների ճնշող մեծամասնությունը (74 տոկոսը) տեղյակ է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ որպես հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող կազմակերպության, գործունեության մասին:


Բացի ՀԿ-ներից, հարցվածներին խնդրել էին պատասխանել, թե արդյոք տեղյակ են որոշ պետական մարմինների մասին, որոնք զբաղվում են կոռուպցիայի դեմ պայքարով (այն է՝ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և Վերահսկիչ պալատ): Նրանց նաև հարցրել էին, թե իրենց կարծիքով այդ մարմիններից յուրաքանչյուրը որքան արդյունավետորեն է պայքարում կոռուպցիայի դեմ: 2010թ. իրազեկության ամենաբարձր մակարդակը՝ 74 տոկոս, գրանցվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի պարագայում: 2008-2010թթ. Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին ծանոթ հարցվածների տեսակարար կշիռն աճել է 5 տոկոսային կետով (Գծապատկեր 26):

Գծապատկեր 26. Հայաստանում հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների մասին իրազեկությունը 2008, 2009 և 2010թթ.



Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատանքի արդյունավետությունը ևս 2010թ. ամենաբարձր գնահատականն է ստացել: Գրասենյակի մասին տեղյակների 46 տոկոսը նշել է որ այն շատ արդյունավետ է կամ որոշ չափով արդյունավետ է, իսկ 27 տոկոսը նշել է, որ այն արդյունավետ չէ: Մինչ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հակակոռուպցիոն գործունեության արդյունավետությունը բարձր է գնահատվել, մյուս պետական մարմինների առումով գնահատականները տարաբնույթ են եղել (Գծապատկեր 27): 2010թ. հարցվածների միայն 14 տոկոսն էր տեղյակ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի մասին, ընդ որում այս թիվը 2008թ. համեմատությամբ 2010թ. փոքր-ինչ նվազել է: Այս կազմակերպությանը ծանոթ մարդկանց 32 տոկոսը 2010թ. նշել է, որ այն շատ արդյունավետ կամ որոշ չափով արդյունավետ պայքար է իրականացնում կոռուպցիայի դեմ, մինչդեռ 35 տոկոսն էլ համարել է, որ այս հաստատությունը շատ կամ լիովին անարդյունավետ պայքար է իրականացնում կոռուպցիայի դեմ: Ինչ վերաբերում է Վերահսկիչ պալատին, ապա դրա մասին տեղյակ է եղել հարցվածների մոտ կեսը (48 տոկոսը), ընդ որում պալատի աշխատանքը արդյունավետ է համարել է տեղյակների 40 տոկոսը (30 տոկոսն այն գնահատել է որպես անարդյունավետ):

Գծապատկեր 27. Կոռուպցիայի դեմ պայքարող տարբեր պետական մարմինների աշխատանքի արդյունավետության գնահատումը (յուրաքանչյուր կազմակերպության մասին տեղյակ մարդկանց թվում, տոկոս)



2010թ. հարցված կանայք սակավ իրազեկ են եղել ցանկում նշված բոլոր պետական կազմակերպությունների մասին, իսկ ըստ բնակավայրերի տիպի վերջիններիս մասին իրազեկությունը նկատելիորեն տարբերվել է: Ինչպես ակներև է Աղյուսակ 11-ից, Երևանում հարցվածներն ավելի իրազեկ են եղել Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի մասին, իսկ այլ քաղաքների բնակիչներն ու գյուղաբնակները՝ Մարդու իրավունքների գրասենյակի և Վերահսկիչ պալատի մասին: Յուրաքանչյուր խմբում իրազեկ մարդկանց փոքր թվի պատճառով հարցվածների տարբեր խմբերում արդյունավետության գնահատման վերլուծություն չի կատարվել:


Աղյուսակ 11. Հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող պետական մարմինների մասին 2010թ. իրազեկվածությունն ըստ բնակավայրի, և սեռատարիքային խմբերի (բոլոր հարցվածների մեջ, ըստ խմբերի, տոկոս)

	Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողով	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	Վերահսկիչ պալատ
Բնակավայրի տիպը			
Երևան	16	71	47
Այլ քաղաքներ	12	76	51
Գյուղական վայրեր	14	73	45
Տարիքային խումբը			
18-29 տարեկան	9	76	46
30-39 տարեկան	13	76	46
40-49 տարեկան	15	77	56
50-59 տարեկան	16	75	51
60 և ավելի տարեկան	11	65	41
Սեռը			
Կանայք	12	71	44
Տղամարդիկ	17	78	54
Բոլորը	14	74	48

Հարցվածների մեծամասնությունն անտեղյակ էր ՇՊԱԿ-ների մասին, սակայն 2008թ.-ից 2010թ. ընկած ժամանակամիջոցում ՇՊԱԿ-ների մասին իրազեկությունն աճել է:

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը ֆինանսավորում է Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնները (ՇՊԱԿ): Վերջիններս աջակցում են քաղաքացիներին՝ կոռուպցիային առնչվող հիմնախնդիրների դեպքում, այդ թվում՝ կոռուպցիայի գոհերին տրամադրելով անվճար իրավաբանական օգնություն: Հարցվածներին խնդրել են պատասխանել, թե արդյոք լսել են ՇՊԱԿ-ների մասին, և հարցվածների մոտ 14 տոկոսը դրական է պատասխանել: ՇՊԱԿ-ների մասին իրազեկությունը 2008թ.-ից մինչև 2010թ. ընկած ժամանակամիջոցում աճել է (Գծապատկեր 28):

Գծապատկեր 28. Իրազեկությունը ՇՊԱԿ-ների և դրանց գործունեության մասին 2008, 2009 և 2010թթ.



Միննույն ժամանակ, հարցվածների շատ փոքր մասն է տեղյակ ՇՊԱԿ-ների դերի մասին (2010թ.՝ 7 տոկոսը) և այն մասին, թե ինչպես օգտվել ՇՊԱԿ-ների ծառայություններից (2010թ.՝ 4 տոկոսը) և կամ ինչ ծառայություններ են դրանք մատուցում (3 տոկոսը):


Իրազեկությունը կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին և դրանց արդյունավետության գնահատումը

Հարցվածների բացարձակ մեծամասնությունն անտեղյակ է կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին:

2010թ. հարցվածների 80 տոկոսը նշել է, որ ընդհանուր առմամբ ծանոթ չէ Հայաստանի կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին (Գծապատկեր 29): Նրանց միայն 19 տոկոսն է նշել, որ ծանոթ է այդ նախաձեռնություններին: Իրազեկության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Երևանում (22տոկոս): Հանրապետության այլ քաղաքներում և գյուղական վայրերում հարցվածների միայն համապատասխանաբար 19 և 16 տոկոսն է տեղյակ եղել կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին: Հարցված տղամարդիկ ավելի իրազեկ են եղել նշված նախաձեռնությունների մասին (23 տոկոսը),

քան կանայք (17 տոկոսը): Կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին տեղյակների թիվը զգալիորեն նվազել է 2008-ից մինչև 2010թ. ընկած ժամանակամիջոցում:

Գծապատկեր 29. Հայաստանի կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին տեղյակ հարցվածները 2008, 2009 և 2010թթ. (բոլոր հարցվածների մեջ տոկոս)




Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ 2010թ. հարցվածների միայն 13 տոկոսն է տեղյակ եղել կառավարության Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի, 16 տոկոսը՝ ՀՀ առողջապահության նախարարության թեժ գծի, 8 տոկոսը՝ կոռուպցիայի վերաբերյալ միջազգային կոնվենցիաների ստորագրման մասին, 15 տոկոսը՝ ճանապարհային ոստիկանության բարեփոխումների և 7 տոկոսը՝ մաքսային գործի թափանցիկության բարձրացմանն ուղղված աշխատանքների մասին: Այսպիսով, 2008թ. և 2009թ. նման, 2010թ. իրազեկության համեմատաբար բարձր մակարդակ է գրանցվել առողջապահության նախարարության թեժ գծի և ճանապարհային ոստիկանության ոլորտում իրականացվող բարեփոխումների առնչությամբ: Հարկ է նշել, որ բոլոր կոնկրետ հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին իրազեկության մակարդակը 2010թ. ավելի ցածր է եղել, քան 2008-2009թթ.:

Կառավարության Հակակոռուպցիոն ռազմավարությանը և դրա իրականացման միջոցառումների ծրագրին ծանոթ մարդիկ գնահատել են նաև դրանց արդյունավետությունը: 2010թ. հարցվածների կարծիքներն այս հարցում կիսվել են. նրանց 50 տոկոսը նշել է, որ այն շատ կամ որոշ չափով արդյունավետ է, իսկ 50 տոկոսն էլ նշել է, որ այն շատ կամ որոշակիորեն անարդյունավետ է: 2009թ. դրական գնահատական տված

մարդկանց տեսակարար կշիռն ավելի բարձր էր (57 տոկոս), իսկ մոտ 35 տոկոսը նշել էր, որ այն կամ շատ կամ որոշ չափով անարդյունավետ է:


Կոռուպցիայի դեմ կառավարության պայքարի արդյունավետության գնահատական խնդրել էին տալ բոլոր հարցվածներին՝ անկախ կառավարության հակակոռուպցիոն նախաձեռնությունների մասին նրանց տեղեկացվածությունից (Գծապատկեր 30): 2010թ. հարցվածների մոտ մեկ երրորդը (31 տոկոսը) կոռուպցիայի դեմ կառավարության պայքարը գնահատել է որպես շատ կամ որոշ չափով արդյունավետ: Այս կարծիքն ունեցողների տեսակարար կշիռը 2008թ. համեմատ 2010թ. նվազել է 8 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ 2010թ. հարցվածների մեծամասնությունը (57 տոկոսը) նշել է, որ կոռուպցիայի դեմ կառավարության պայքարը շատ կամ որոշ չափով անարդյունավետ է. այս ընկալումն ունեցողների բաժինը 2008-ից 2010-ն ընկած ժամանակամիջոցում աճել է մոտ 1,5 անգամ (2008թ. այն կազմել է 39 տոկոս):

Գծապատկեր 30. Կոռուպցիայի դեմ կառավարության պայքարի արդյունավետության ընկալումները 2008, 2009 և 2010թթ.



Նշված ժամանակամիջոցում այս հարցի մասին հստակ պատկերացում չունեցողների բաժինը նույնպես նվազել է: Կառավարության հակակոռուպցիոն ջանքերն անարդյունավետ համարողների բաժինը Երևանում 2010թ. կազմել է մոտ 69 տոկոս, այլ քաղաքներում՝ 57 տոկոս, իսկ գյուղական վայրերում՝ 47 տոկոս: Միաժամանակ, 2010թ. հարցվածների մոտ 41 տոկոսը համամիտ է, որ Հայաստանի ներկայիս կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարելու անկեղծ ցանկություն և կամք ունի (Գծապատկեր 31):

Գծապատկեր 31. Որքանով եք համամիտ հետևյալ կարծիքին. Հայաստանի ներկայիս կառավարությունն ունի կոռուպցիայի դեմ պայքարելու անկեղծ ցանկություն և կամք




Զանգվածային լրատվամիջոցները և ասեկոսենները որպես կոռուպցիայի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր

Հայաստանցիների մեծ մասի համար կոռուպցիայի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրները զանգվածային լրատվամիջոցներն ու ասեկոսեններն են:

Բացի տարբեր հակակոռուպցիոն կազմակերպությունների մասին իրազեկությունից և դրանց գործունեության գնահատումից, հարցվածներին խնդրել են նշել երկրում կոռուպցիայի մասին տեղեկատվություն ստանալու մինչև երեք հիմնական աղբյուր (Գծապատկեր 32): 2010թ. հետազոտությամբ հարցվածների 73 տոկոսը մատնանշել է զանգվածային լրատվամիջոցները (այն է՝ հեռուստատեսությունը, ռադիոն և թերթերը): Մարդկանց լուրեր հասցնելու գործում ասեկոսենները նույնպես առաջատար դեր են խաղացել. հարցվածների մոտ 70 տոկոսը նշել է, որ իրենք տեղեկատվությունը ստանում են ընկերների և ծանոթների հետ զրույցներից, իսկ 56 տոկոսը հիմնվում է ազգականների ու ընտանիքի անդամների տրամադրած տեղեկությունների վրա: Տեղեկատվության մյուս աղբյուրը սեփական փորձն է եղել (30 տոկոս): ՀԿ-ներից տեղեկատվություն է ստացել հարցվածների 7 տոկոսը:

Գծապատկեր 32. Երկրում կոռուպցիայի մասին տեղեկատվության աղբյուրները 2008թ., 2009թ. և 2010թ. (բոլոր հարցվածների թվում, տոկոս)



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրանքի չափը: 2010թ. հետազոտությամբ ընդգրկվել են Հայաստանի չափահաս (18 տարեկան և բարձր) բնակչությունը ներկայացնող 1528 հարցվածներ: 2009թ. հարցվածների թիվը կազմել է 1515, իսկ 2008թ.՝ 1549:

Միավի թույլատրելի սահմանը: $\pm 2.5\%$ ՝ 95% վստահության միջակայքում:

Ընտրանքի մեթոդը՝ բազմաստիճան քլաստերային ընտրանք՝ նախապես բաժանելով ըստ քաղաքային, գյուղական վայրերի և մարզերի:

Ընտրանքի շրջանակը կամ գլխավոր համակցությունը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված ֆիզիկական անձ բաժանորդների հասցեների ցուցակները: Ընտրանքը կազմավորելու քառաստիճան մոտեցումն իրականացվել է հետևյալ քայլերի միջոցով.

- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի մասնաճյուղերի խմբավորում ըստ մարզերի և ընտրանքի համամասնական բաշխում ըստ մարզերի, ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի,
- մարզերի ներսում նախնական ընտրանքային միավորների կամ քլաստերների ձևավորում (դրանք միջինում ընդգրկել են 500 տնային տնտեսություն, ինչը հաճախ համապատասխանել է միևնույն ենթակայանից էլեկտրամատակարարում ստացող տնային տնտեսությունների թվին) և պատահական ընտրանք,
- ընտրանքի նախնական միավորների սահմաններում տնային տնտեսությունների պատահական ընտրություն,
- տնային տնտեսությունում հարցվողի ընտրություն՝ առաջիկա ծննդյան օրվա մեթոդով:

Ընտրանքային հետազոտության տարածքային ընդգրկումն ըստ բնակավայրերի և մարզերի.

Բնակավայր	2010թ.	2009թ.	2008թ.
Երևան	502	528	540
Այլ քաղաքներ	462	475	509
Գյուղական վայրեր	564	512	500
Մարզ	2010թ.	2009թ.	2008թ.
Արագածոտն	72	72	66
Արարատ	129	121	117
Արմավիր	142	111	124
Գեղարքունիք	116	93	99
Կոտայք	134	140	143
Լոռի	144	155	156
Շիրակ	136	131	136
Սյունիք	72	72	73
Վայոց Ձոր	24	24	29
Տավուշ	57	68	66
Երևան	502	528	540

Տվյալների հավաքագրման աշխատանքների հիմնական ժամանակահատվածը: 2010թ.-ի նոյեմբերի 6-ից մինչև 22-ը:

Էմպիրիկ տվյալների հավաքագրման մեթոդը՝ դեմ առ դեմ հարցազրույց տնային տնտեսության կազարանում՝ թուղթ և գրչի օգնությամբ:

Կշիռների մասին. տվյալների հավաքագրումից հետո դրանք կշռվել են ըստ մարզի, տարիքի և սեռի՝ իրականացված ընտրանքը նպատակային բնակչության պարամետրերին համապատասխանեցնելու համար: Ընտրանքով ձևավորված նախնական կշիռները ճշգրտվել են՝ հիմք ընդունելով չափահաս բնակչության կազմի վերաբերյալ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տվյալներն ըստ մարզերի, տարիքի և սեռի, ինչպես նաև հարցմանը մասնակցելուց հրաժարումների գործակիցներն՝ ըստ քլաստերների:

Տվյալների որակի լրացուցիչ, անուղղակի գնահատականներ. հարցազրուցավարների կողմից հարցազրույցի ավարտից հետո՝ դրա ընթացքի և հարցվածի վերաբերյալ արված նշումները թույլ են տվել պարզել, որ.

- հարցվածների 77%-ը իրազեկ է եղել իրեն տրվող հարցերի ավելի քան 60%-ին;
- հարցվածների 71%-ը կամ պարզաբանումներ բնավ չի խնդրել հարցերի էություն վերաբերյալ, կամ դա արել է հարցերի ոչ ավելի, քան 20%-ի դեպքում:
- հարցվածների 16%-ը դժկամությամբ է պատասխանել հարցերի զգալի մասին (6%) կամ էլ որոշ՝ 10-20 հարցերի (10%);
- հարցվածների միայն 7%-ն են իրենց պատասխաններում ոչ անկեղծ թվացել:

Տվյալների հասանելիությունը և մեկնաբանությունը. տվյալների շտեմարանը հետագա վերլուծությունների համար հասանելի է www.crrc.am կայքի «Օրագրեր և ծառայություններ» բաժնում: Տվյալները մեկնաբանելիս հարկավոր է ուշադիր լինել հատկապես պատճառահետևանքային կապերի մասին ենթադրություններ անելիս: Առանձնակի ուշադրություն է պահանջվում նաև բոլոր խաչաձև աղյուսակների տվյալները մեկնաբանելիս. հարցվածների թվի նվազմանը գուցա հետ, որպես կանոն, նվազում է վստահությունը տվյալների ներկայացուցչականության նկատմամբ, և հարկ է լինում արդյունքները վերապահումով ընկալել հատկապես այն դեպքերում, երբ հարցվածները փոքր երկնիշ թվերով են արտահայտված: Ընտրանքի սխալի և այլ ցուցանիշների մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել crrc@crrc.am հասցեով:

Համագործակցության խնդրանք. թեև տվյալների ճշգրտությունն ապահովելու համար կատարվել են մի շարք ստուգումներ, մենք շնորհակալ կլինենք Ձեր դիտողությունները համար: Ձեր բոլոր մեկնաբանությունները կարող եք ուղարկել Երևան, Աբովյան 52 (312 սենյակ) հասցեով, կամ crrc@crrc.am էլ. փոստով:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ

ՀՀ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ
2010թ. Նոյեմբեր

M-1. Տ/տ իդենտիֆիկացիոն կոդը.
Ստրատա Կլաստեր տ/տ համար

[ԶՐՈՒՑԱՎԱՐ. M-1-ը ԱՐՏԱԳՐԵՔ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻՑ:]

[Զրուցվա՞ր, “ԶԳԻՏԵՄ” ԵՎ “ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՄ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ” ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՊԵՏՔ ԶԷ
ԲԱՐՁՐԱԶԱՅՆ ԿԱՐԴԱԼ: ԵԹԵ ԱՅԼ ՑՈՒՑՈՒՄ ԶԿԱ, ՀԱՄԱՐԵՔ, ՈՐ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐՆ ՈՒՆԵՆ
ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:]

Նախ խոսենք Հայաստանի ընդհանուր իրավիճակի մասին:

Q1. Ասացե՞ք խնդրեմ, որքանո՞վ եք
հետաքրքրված քաղաքականությամբ և
պետական կառավարման
համակարգով:
[Զ/Վ. Կարդացե՞ք տարբերակները:]

Շատ եմ հետաքրքրված	1
Որոշ չափով եմ հետաքրքրված	2
Քիչ եմ հետաքրքրված	3
Բոլորովին հետաքրքրված չեմ	4
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

Q2. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կնկարագրեք
Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակը:
[Զ/Վ. Կարդացե՞ք տարբերակները:]

Շատ լավ	1
Լավ	2
Միջին	3
Վատ	4
Շատ վատ	5
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

Q3. Որքանո՞վ եք բավարարված Հայաստանի
ընդհանուր իրավիճակով:
[Զ/Վ. Կարդացե՞ք տարբերակները:]

Լիովին բավարարված եմ	1
Ավելի շուտ բավարարված եմ	2
Ավելի շուտ բավարարված չեմ	3
Բոլորովին բավարարված չեմ	4
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

Q4. Ձեր կարծիքով, որո՞նք են այսօր
Հայաստանի ամենալուրջ
խնդիրները:
[Զ/Վ. Մի կարդացե՞ք ցանկը:
Ընդունե՞ք մինչև 3 պատասխան:]

Գործազրկություն	1
Աղքատություն	2
Քաղաքական անկայունություն	3
Վատ առողջապահական համակարգ/ առողջապահական ծառայություններ	4
Վատ ենթակառուցվածքներ	5
Խնդիրներ կրթական համակարգում	6

Խնդիրներ կենսաթոշակային համակարգում	7
Սղաճ/բարձր գներ	8
Արտագաղթ/էմիգրացիա	9
Ընդհանուր տնտեսական խնդիրներ	10
Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը	11
Կոռուպցիա	12
Կառավար. և ընդդիմության միջև ընդհարումներ	13
Հանցագործության մակարդակ	14
Հարևան երկրների հետ հարաբերություններ (բացի Լեռնային Ղարաբաղի խնդրից)	15
Այլ, նշեք _____	16
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

Q5. Ձեր կարծիքով, որքա՞ն լուրջ
խնդիր է կոռուպցիան
կաշառակերությունը,
հովանավորչությունը)
Հայաստանում:
[Զ/Վ. Կարդացեք
տարբերակները:]

Շատ լուրջ	1
Բավական լուրջ	2
Որոշ չափով լուրջ	3
Բնավ լուրջ չէ	4
[ՄԻ ԿԱՐԴԱՅԵՔ] (Հայաստանում կոռուպցիա գոյություն չունի)	5
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

ԿՈՌՈՒՊՑԻԱ

Այժմ եկեք խոսենք կոռուպցիայի մասին:

Q6. Համամի՞տ եք արդյոք, որ ՀՀ
քաղաքացիները կոռուպցիան
Հայաստանում համարում են բնական
երևույթ: [Զ/Վ. Կարդացեք տարբերակները:]

Այո, լիովին համամիտ եմ	1
Այո, որոշ չափով համամիտ եմ	2
Ոչ, այնքան էլ համամիտ չեմ	3
Ոչ, բոլորովին համամիտ չեմ	4
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

Q7. Ըստ Ձեզ, անցյալ տարվա համեմատ
ինչպիսի՞ն է ներկայումս կոռուպցիայի
մակարդակը Հայաստանում:
[Զ/Վ. Կարդացեք տարբերակները:]

Շատ ավելի բարձր է	1
Որոշ չափով ավելի բարձր է	2
Գրեթե նույն չափ է	3
Որոշ չափով ավելի ցածր է	4
Շատ ավելի ցածր է	5
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

Q8. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ Q8]
Ձեր կարծիքով, ինչ չափով
կարող է կրճատվել
կոռուպցիան Հայաստանում:

Առհասարակ չի կարող կրճատվել	1
Կարող է կրճատվել միայն որոշ չափով	2
Կարող է կրճատվել միայն որոշ չափով	3
Կարող է ամբողջովին վերացվել	4
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

Q9. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔՄՏՏ Q9] Այժմ ես կկարդամ Հայաստանում գործող հաստատությունների և գրասենյակների մի ցանկ: Ի՞նչ կասեք այդ հաստատություններից յուրաքանչյուրի կոռումպացվածության աստիճանի մասին:	մեծապես կոռումպացված է	որոշ չափով է կոռումպացված	շատ քիչ է կոռումպացված	բնավ կոռումպացված չէ	(Զգիտել)	(Հրաժ. պատ.)
1. Նախագահի աշխատակազմ	1	2	3	4	98	99
2. Կառավարության աշխատակազմ	1	2	3	4	98	99
3. Նախարարություններ	1	2	3	4	98	99
4. Տարածքային կառավարման մարմինը (մարզպետարան)	1	2	3	4	98	99
5. Երևանի քաղաքապետարանը	1	2	3	4	98	99
6. Տեղական ինքնակառավարման մարմինները (քաղաքապետարան, թաղաքապետարան, գյուղապետարան)	1	2	3	4	98	99
7. Ազգային ժողով	1	2	3	4	98	99
8. Քաղաքացիական ծառայության խորհուրդ	1	2	3	4	98	99
9. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	1	2	3	4	98	99
10. Դատախազություն	1	2	3	4	98	99
11. Դատարաններ	1	2	3	4	98	99
12. Իրավապահ (կատարածու) մարմիններ	1	2	3	4	98	99
13. Օմբուդսմեն (մարդու իրավունքների պաշտպան)	1	2	3	4	98	99
14. Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)	1	2	3	4	98	99

Q10. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔՄՏՏ Q10] Իսկ այժմ ես կկարդամ Հայաստանի տարբեր ոլորտների և ծառայությունների մի ցանկ: Օգտվելով քարտից ասացեք ինդեքս, Ձեր կարծիքով որքանո՞վ է տարածված կոռուպցիան դրանցից ամեն մեկում:	շատ տարածված է	բավականին տարածված է	քիչ է տարածված	տարածված չէ կա	(Զգիտել)	(Հրաժ. պատ.)
1. Առողջապահություն (պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ և այլն)	1	2	3	4	98	99
2. Կրթություն (մանկապարտեզներ, դպրոցներ, բուհեր և այլն)	1	2	3	4	98	99
3. Պետական ռեգիստր (մասնավոր ձեռնարկությունների, ՀԿ-ների և այլնի գրանցում)	1	2	3	4	98	99
4. Դատական ակտերի (դատարանի որոշումների) հարկադիր կատարման մարմին	1	2	3	4	98	99
5. Պաշտպանության համակարգ (բանակ)	1	2	3	4	98	99
6. Ընտրական համակարգ/գործընթացներ (ընտրահանձնաժողովներ, ընտրացուցակներ, քվեաթերթերի հաշվարկ, անհատների/կուսակցությունների նախընտրական քարոզարշավ և այլն)	1	2	3	4	98	99
7. Մաքսային ծառայություն	1	2	3	4	98	99
8. Հարկային ծառայություն	1	2	3	4	98	99
9. Լիցենզավորում և հավատարմագրում իրականացնող մարմիններ	1	2	3	4	98	99
10. Պետավտոտեսչություն	1	2	3	4	98	99
11. Ոստիկանություն (բացառությամբ պետավտոտեսչության)	1	2	3	4	98	99
12. Անշարժ գույքի պետական կադաստր	1	2	3	4	98	99
13. Նոտարական ծառայություն	1	2	3	4	98	99

14. Սոցիալական ապահովություն (թոշակներ, նպաստեր և այլն)	1	2	3	4	98	99
15. Կապ (հեռախոսակապ, ինտերնետ տրամադրողներ և այլն)	1	2	3	4	98	99
16. Կոմունալ ծառայություններ (ջուր, գազ, էլեկտրաէներգիա)	1	2	3	4	98	99
17. Համայնքային ծառայություններ (աղբահանություն, թույլտվությունների տրամադրում և այլն)	1	2	3	4	98	99
18. Քաղաքաշինություն (հողհատկացում, շինարարություն և այլն)	1	2	3	4	98	99
19. Գործարար ոլորտ (բիզնես)	1	2	3	4	98	99
20. Զանգվածային լրատվամիջոցներ (հեռուստաընկերություններ, ռադիոթերթեր և այլն)	1	2	3	4	98	99
21. Քաղաքական կուսակցություններ	1	2	3	4	98	99
22. Հասարակական կազմակերպություններ	1	2	3	4	98	99
23. Եկեղեցի	1	2	3	4	98	99

Q11. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ Q11]

Վերը (Q10-ում) նշված
ոլորտներից և
ծառայություններից խնդրում
ենք նշել, թե ո՞րն է.

	կողմ Q10-ից
1 ^{ին} ամենակոռումպացվածը	
2 ^{րդ} կոռումպացվածը	
3 ^{րդ} կոռումպացվածը	
(Զգիտեմ)	98
(Հրաժարվ. եմ պատասխանել)	99

Q12. Ձեր կարծիքով կոռուպցիան
առավել լայն է տարածված
ցածրաստիճան, միջին, թե՛
բարձրաստիճան
պաշտոնյաների շրջանում:
[Զ/Վ. Կարդացեք
տարբերակները:]

Բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում (նախագահ, վարչապետ, նախարարներ, փոխնախարարներ, մարզպետեր, Ազգային ժողովի անդամներ)	1
Միջին աստիճանի պաշտոնյաների շրջանում (վարչությունների/բաժինների պետեր, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ)	2
Ցածրաստիճան պաշտոնյաների շրջանում	3
[ՄԻ ԿԱՐԴԱՅԵՔ] Կոռուպցիայի աստիճանը նույնն է բոլոր մակարդակներում	4
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

Q13. Ձեր կարծիքով,
պաշտոնյաների
կողմից պահանջվող
կաշառքը վերջին
տարում աճել է,
նվազել է, թե՛ մնացել է
նույնը:

[Զ/Վ. Եթե հարցվողը
պատասխանում է աճել է
կամ նվազել է, ճշտեք, թե
ի՞նչ չափով:]

	Q13A Կաշառքի չափը	Q13B Կաշառքի հաճախականությունը
1. Էականորեն աճել է	1	1
2. Որոշ չափով աճել է	2	2
3. Չի փոխվել անցյալ տարվա համեմատ	3	3
4. Որոշ չափով նվազել է	4	4
5. Էականորեն նվազել է	5	5
6. (Զգիտեմ)	98	98
7. (Հրաժարվում եմ պատասխանել)	99	99

Q14. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ Q14]
**Խնդրում ենք քարտում
 բերվածներից
 առանձնացնել և ըստ
 կարևորության
 տարակարգել
 տեղեկատվության այն
 առավել կարևոր
 աղբյուրները՝ մինչև 3-ը,
 որոնց վրա հիմնվելով եք
 գնահատում երկրում
 կոռուպցիայի
 մակարդակը: [Զ/Վ:
 Ընդունեք մինչև 3
 պատասխան՝ խնդրելով
 դասավորել դրանք ըստ
 կարևորության:]**

		Կարևորությունը I, II, III
1. Անձնական փորձ (օրինակ՝ դուք ստիպված եք եղել կաշառք տալ կանխիկով նվերով կամ մեկ այլ լավություն անել որևէ ծառայության դիմաց)		
2. Ազգականների կամ ընտանիքի անդամների հետ զրույցներ		
3. Ընկերների և ծանոթների հետ զրույցներ		
4. ՀԿ-ների կողմից կոռուպցիայի մասին տրված տեղեկատվություն (հանրային իրազեկում)		
5. Լրատվամիջոցների կողմից տրված տեղեկատվություն (հեռուստատեսություն, ռադիո, թերթեր, ինտերնետ, և այլն)		
6. Այլ, նշեք _____		
(Զգիտեմ)		98
(Հրաժարվ. եմ պատասխանել)		99

Q15. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ Q15] Ստորև նշված են տեղեկատվություն աղբյուրներ, որոնցից կարելի է նորություններ իմանալ Հայաստանի քաղաքական և տնտեսական զարգացումների մասին: Խնդրում եմ պատասխանել դրանց վերաբերյալ մի քանի հարցերի: Եթե նշվածներից գատ օգտվում եք նաև այլ լրատվամիջոցներից, ապա նշեք նաև դրանք: [Զ/Վ: Ընդունեք մինչև 3 “այլ” պատասխան, բայց մի պահանջեք մեկից ավելին: Գրանցեք դրանց անունը/ները «Այլե տողում և տվեք Q15B հարցը:]	Q15A. Օգտվե՞լ եք այս լրատվամիջոցից վերջին 12 ամսվա ընթացքում:		[Այն լրատվամիջոցի համար, որի Q15.A = 1, հարցրեք Q15.B] Q15B. Բացի այսօրվանից, երբ եք վերջին անգամ օգտվել [Կարդացե՛ք ցանկում լրատվամիջոցի անունը] տեղեկանալու համար Հայաստանում քաղաքական և տնտեսական զարգացումներին:				Q15C. Տրամադրված տեղեկատվության հավաստիության առումով Ձեր նախընտրած լրատվամիջոցներից որի՞ն էք վստահում առավելագույնս: [Մեկ պատասխան: Չբացակի մեջ արժեք համաստատական տատանոցի համար:]
	Այո	Ոչ	Երեկ	Վերջին 7 օրվա ընթացքում	Վերջին 4 շաբաթների ընթացքում	Ավելի հազվադեպ	
1. Հ1 Հանրային հեռուստաընկ.	1	0	1	2	3	4	1.
2. «Երկիր Մեդիա» ՀԸ	1	0	1	2	3	4	2.
3. «Շանթ» ՀԸ	1	0	1	2	3	4	3.
4. «Արմենիա» ՀԸ	1	0	1	2	3	4	4.
5. Հ2 ՀԸ	1	0	1	2	3	4	5.
6. ԱԼՄ ՀԸ	1	0	1	2	3	4	6.
7. «Կենտրոն» ՀԸ	1	0	1	2	3	4	7.
8. PTP ՀԸ	1	0	1	2	3	4	8.
9. OPT ՀԸ	1	0	1	2	3	4	9.

10. Հայաստանի հանրային ուղի	1	0	1	2	3	4	10.
11. «Ազատությունն ուղիովայան	1	0	1	2	3	4	11.
12. «Հայ FM» ուղիովայան	1	0	1	2	3	4	12.
13. «Չորրորդ իշխանությունն թերթ	1	0	1	2	3	4	13.
14. «Առավոտն թերթ	1	0	1	2	3	4	14.
15. «Ազգն թերթ	1	0	1	2	3	4	15.
16. «Հայոց աշխարհն թերթ	1	0	1	2	3	4	16.
17. «Հայկական ժամանակն թերթ	1	0	1	2	3	4	17.
18. «Երկիրն թերթ	1	0	1	2	3	4	18.
19. «Հայաստանի հանրապետությունն թերթ	1	0	1	2	3	4	19.
20. «Գոյոս Արմենիին թերթ	1	0	1	2	3	4	20.
21. «Իրավունքն թերթ	1	0	1	2	3	4	21.
22. [Ձ/Վ. Հարցնել միայն մարզերում] Տեղական (մարզային) հեռուստաընկերություն	1	0	1	2	3	4	22.
23. [Ձ/Վ. Հարցնել միայն մարզերում] Տեղական (մարզային) թերթ	1	0	1	2	3	4	23.
24. www.a1plus.am	1	0	1	2	3	4	24.
25. Այլ նորությունների վեբ կայք	1	0	1	2	3	4	25.
26. Այլ, նշեք.....	1	0	1	2	3	4	26.
27. Այլ, նշեք.....	1	0	1	2	3	4	27.
28. Այլ, նշեք.....	1	0	1	2	3	4	28.
97. Ոչ մեկին չեմ վստահում							97.

Q16. Այժմ կկարդամ գործողությունների մի քանի տեսակներ: Դրանցից ամեն մեկի համար ասացեք խնդրեմ, Ձեր պատկերացմամբ դրանք կոռուպցիոն են, թե՞ ոչ:	Այո	Ոչ	(ԶԳ)	(ՀՊ)
1. Ոստիկանին գումար առաջարկել՝ Ձեր վարորդական իրավունքը չառգրավելու/չվերցնելու համար	1	0	98	99
2. Նվեր տալ բժիշկին՝ հատուկ խնամք ստանալու համար	1	0	98	99
3. Երբ պետական պաշտոնյան օգնում է բարեկամին ԲՈՒՀ ընդունվել	1	0	98	99
4. Հարևանի այգուց ծաղիկ կամ միրգ քաղել՝ առանց վերջինիս թույլտվության	1	0	98	99
5. Կապերի/ծանոթությունների օգտագործում՝ Ձեզ մոտիկ որևէ մեկին բանակից ազատելու համար	1	0	98	99
6. Վճարել դատավորին՝ ցանկալի վերաբերմունք /վճիռ ստանալու համար	1	0	98	99
7. Ուսանողը կամ ուսանողի ծնողը դասախոսին նվեր են տալիս քննությունների օրը	1	0	98	99
8. Փոքր ոչ պաշտոնական վճարումներ կատարել թոշակների ստացման համար	1	0	98	99
9. Պետ. պաշտոնյան երաշխավորում է իր բարեկամին՝ որևէ նախարարությունում աշխատանքի տեղավորելու համար	1	0	98	99
10. Պետական պաշտոնյայի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումը անձնական կարիքների համար	1	0	98	99
11. Պետական պաշտոնի օգտագործումն անձնական բիզնեսի նպատակներով	1	0	98	99

**Q17. Ձեր կարծիքով, պետական
պաշտոնյային կաշառք տալիս,
թվարկված դեպքերից ո՞րն է
առավել հաճախ հանդիպում:**
[Զ/Վ. Կարդացեք
տարբերակները: ԸՆԴՈՒՆԵՔ
ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ:]

Պետական պաշտոնյան ակնարկում է կամ պահանջում է վճարում	1
Մարդիկ իրենց կամքով են վճար առաջարկում	2
Նախապես հայտնի է, թե որքան և ինչպես վճարել, դա չի քննարկվում	3
Այլ, նշեք	4
(Զգիտեմ)	98
(Հրաժարվում եմ պատասխանել)	99

**Q18. Պետական պաշտոնյային ծառայություն
ստանալու կամ խնդիր լուծելու
նպատակով կաշառք տված անձը
որքանո՞վ կարող է վստահ լինել, որ
ծառայությունը կմատուցվի/խնդիրը
կլուծվի:** [Զ/Վ. Կարդացեք
տարբերակները: ԸՆԴՈՒՆԵՔ ՄԵԿ
ՊԱՏԱՍԽԱՆ:]

Լիովին վստահ	1
Որոշ չափով վստահ	2
Փոքր-ինչ անվստահ	3
Բացարձակապես անվստահ	4
(Զգիտեմ)	9
(Հրաժ. եմ պատասխանել)	99

**Q19. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ Q19] Այժմ ես
կկարդամ կոռուպցիայի որոշ
հնարավոր դրդապատճառներ:
Ձեր կարծիքով, դրանցից որո՞նք
են հիմնականում մարդկանց
դրդում կոռուպցիոն վարքագիծ
դրսևորելու: Նկատի ունենք այն
պատճառները, որոնք մարդիկ
նշում են իրենց կոռուպցիոն
վարքագիծն արդարացնելու
համար:**
[Զ/Վ. Ընթերցեք տարբերակները:
Ընդունեք մինչև երեք
պատասխան:]

Խնդիրը լուծելու այլ տարբերակ չկա	1
Խուսափել պատժից/տուգանքից	2
Խուսափել ավելի բարձր պաշտոնական վճարումներից	3
Արագացնել որևէ գործընթաց	4
Ստանալ պատշաճ վերաբերմունք (ծառայություն)	5
Ստանալ արտոնյալ վերաբերմունք	6
Եկամտի այլընտրանքային աղբյուր ունենալ	7
Վերադասներին պարտադիր (ապօրինի) վճարումների պրակտիկա	8
Այլ, նշեք.....	9
(Զգիտեմ)	98
(Հրաժարվ. եմ պատասխանել)	99

ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈՐՁ

Հաջորդ մի քանի հարցերը վերաբերում են կոռուպցիայի հետ կապված Ձեր անձնական փորձին:
Հիշեցնեմ, որ Ձեր պատասխանները խիստ գաղտնի կմնան:

**Q20. Պատկերացրեք, որ Ձեզ կաշառք են
առաջարկում (դրամի, նվերի կամ այլ
տեսքով): Ինչպե՞ս կվարվեք նման
իրավիճակում:** [Զ/Վ. Մի կարդացեք:]

Կվերցնեմ	1	
Չեմ վերցնի	0	[=>Q22]
Այլ, նշեք.....	2	[=>Q23]
(Զգիտեմ)	98	[=>Q23]
(Հրաժարվ. եմ պատասխ.)	99	[=>Q23]

Q21. Ինչու՞ կվերցնեիք: [Զ/Վ. Մի ընթերցեք տարբերակները: Նշեք այն տարբերակը, որին հարցվողի պատասխանն առավել մոտ է: Եթե նման տարբերակ չկա, պատասխանը գրանցեք «Այլե տողում»:]

քանի որ բոլորն են վերցնում	1	[=>Q23]
քանի որ փողի կարիք ունեմ/փող եմ սիրում	2	[=>Q2]
քանի որ պարտավոր կլինեի մի մասը «վերսն տալ	3	[=>Q23]
Այլ, նշեք.....	4	[=>Q23]
(Զգիտեմ)	98	[=>Q23]
(Հրաժարվ. եմ պատասխ.)	99	[=>Q23]

Q22. Ինչու՞ չեիք վերցնի: [Զ/Վ. Մի ընթերցեք տարբերակները: Նշեք այն տարբերակը, որին հարցվողի պատասխանն առավել մոտ է: Եթե նման տարբերակ չկա, պատասխանը գրանցեք «այլե տողում»:]

քանի որ պատժվելու ռիսկը բարձր է	1	
քանի որ դա ինձ համար ընդունելի չէ (բարոյական/կրոնական պատճառներ)	2	
չեի վերցնի և կփորձեի հարցին իրավական ընթացք տալ	3	
որպեսզի կոռուպցիան պակասի/վերանա	4	
Այլ, նշեք.....	9	
(Զգիտեմ)	98	
(Հրաժարվ. եմ պատասխանել)	99	

Q23. Պատկերացրեք, որ Ձեզանից պահանջվում է կաշառք տալ (դրամի, նվերի կամ այլ տեսքով): Ինչպե՞ս կվարվեք այս պարագայում: Կտայի՞ք: [Զ/Վ. Մի կարդացեք:]

Այո, կտայի	1	
Ոչ, չեի տա	0	[=>Q25]
Այլ, նշեք.....	2	[=>Q26]
(Զգիտեմ)	98	[=>Q26]
(Հրաժարվ. եմ պատասխ.)	99	[=>Q26]

Q24. Ինչու՞ կտայիք: [Զ/Վ. ՄԻ ԸՆԹԵՐՑԵՔ տարբերակները: Նշեք այն տարբերակը, որին հարցվողի պատասխանն առավել մոտ է: Եթե նման տարբերակ չկա, պատասխանը գրանցեք «Այլե տողում»:]

քանի որ բոլորը տալիս են	1	[=>Q26]
քանի որ ծառայությունը ստանալու այլ տարբերակ չկա	2	[=>Q26]
քանի որ կկարողանա ի «բանակցել ավելի ցածր գումար	3	[=>Q26]
Գործընթացն արագացնելու համար	4	[=>Q26]
Համոզված լինելու համար	5	[=>Q26]
Այլ, նշեք.....	6	[=>Q26]
(Զգիտեմ)	98	[=>Q26]
(Հրաժարվ. եմ պատասխանել)	99	[=>Q26]

Q25. Ինչու՞ չեիք տա: [Զ/Վ. ՄԻ ԸՆԹԵՐՑԵՔ տարբերակները: Նշեք այն տարբերակը, որին հարցվողի պատասխանն առավել մոտ է: Եթե նման տարբերակ չկա, պատասխանը գրանցեք «Այլե տողում»:]

քանի որ պատժվելու ռիսկը բարձր է	1	
քանի որ դա ինձ համար ընդունելի չէ	2	
չեի տա և կփորձեի հարցը իրավական ճանապարհով լուծել	3	
Փող/հնարավորություն չունեմ	4	
Այլ, նշեք.....	5	
(Զգիտեմ)	98	
(Հրաժարվ. եմ պատասխանել)	99	

